Հավելված
ՀՀ վերահսկիչ պալատի խորհրդի
2015 թվականի մարտի 27-ի
թիվ 9/1 որոշման

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հաշվետու տարում Հայաստանի Հանրապետության վերահսկիչ պալատի (այսուհետ՝ Վերահսկիչ պալատ) գործունեությունն իրականացվել է՝ ***Հայաստանի Հանրապետության Սահմանադրության և «Վերահսկիչ պալատի մասին»*** Հայաստանի Հանրապետության օրենքին, Վերահսկիչ պալատի 2014 թվականի գործունեության տարեկան ծրագրին (այսուհետ՝ Տարեկան ծրագիր) համապատասխան:

Վերահսկողության արդյունքներն ամփոփվել են Վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվություններում: Առավել մանրամասն տեղեկատվությունը տեղադրված է Վերահսկիչ պալատի պաշտոնական ինտերնետային էջում (www.coc.am):

Հաշվետու տարում վերահսկվող օբյեկտներից ոչ մեկը, համաձայն «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 25-րդ հոդվածի դրույթների, սահմանված կարգով չի բողոքարկել Վերահսկիչ պալատի կողմից իրականացված վերահսկողության արդյունքները:

Ղեկավարվելով «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 24-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջներով, վերահսկվող օբյեկտների ղեկավարները Վերահսկիչ պալատին տրամադրել են տեղեկատվություն՝ հայտնաբերված և ընթացիկ հաշվետվություններում ամրագրված խախտումները վերացնելու մասին:

Վերահսկողության արդյունքների վերաբերյալ տարեկան հաշվետվությունը կազմելիս Վերահսկիչ պալատն առաջնորդվել է «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքով և ***Բարձրագույն վերահսկիչ մարմինների միջազգային կազմակերպության*** (INTOSAI) սկզբունքներով:

# 2. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ

## 2.1. ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ՄԻՋԱՎԱՅՐ

Հաշվետու տարում Վերահսկիչ պալատը վերահսկողություն է իրականացրել ՀՀ էկոնոմիկայի նախարարության կողմից իրագործվող մի շարք ծրագրերի նկատմամբ, որոնք, ըստ էության, պետք է նպաստեին Հայաստանի Հանրապետությունում ներդրումային միջավայրի բարելավմանը:

Վերահսկողությամբ արձանագրվել են մի շարք խախտումներ և թերություններ: Բացահայտվել են խնդիրներ, որոնք բացասաբար են ազդել ծրագրերի իրականացման ընթացքի վրա:

**Մասնավորապես՝**

**<u>«Աջակցություն փոքր ու միջին ձեռնարկատերերի սուբյեկտներին»</u>**

Ծրագրի նպատակը սկսնակ և/կամ գործող փոքր ու միջին ձեռնարկատերերին (այսուհետ՝ ՓՄՁ) ֆինանսական, ուսուցողական, խորհրդատվական, բիզնես ծրագրերի մշակման աջակցություն ցուցաբերելն ու նոր աշխատատեղերի ստեղծումն է:

«Աջակցություն ՓՄՁ սուբյեկտներին» տարեկան ծրագրերի իրականացման նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հետ 2013 թվականին կնքել է դրամաշնորհի պայմանագիր՝ 150,000.0 հազ. դրամ գումարով, իսկ 2014 թվականին՝ 151,983.7 հազ. դրամ գումարով: Վերը նշված գումարներն ուղղվել են Հիմնադրամի աշխատակիցների աշխատավարձի վճարմանը՝ ՓՄՁ սուբյեկտներին աջակցություն ցուցաբերելու նպատակով:

**2013 և 2014թթ. դրամաշնորհի շրջանակներում իրականացված աշխատանքների վերահսկողության արդյունքում պարզվել է.**

Հիմնադրամը չի իրականացրել հոգաբարձուների խորհրդի կողմից հաստատված կանոնակարգերով, ինչպես նաև՝ բանկերի և/կամ ունիվերսալ վարկային կազմակերպությունների (ՈՒՎԿ) հետ կնքված համագործակցության պայմանագրերով նախատեսված երաշխավորությունների դիտարկում, չի կազմել հաշվետվություններ: Արդյունքում՝ Հիմնադրամը պատշաճ կերպով չի իրազեկել երաշխավորությունները ստանալուց հետո ՓՄՁ-ների գործունեության կարգավիճակի մասին՝ արդյոք վերջիններս գործում են, թե դադարեցրել են իրենց գործունեությունը կամ լուծարվել են:

Հիմնադրամի մասնագետների կողմից չի կատարվել կանոնակարգով նախատեսված՝ շահառուի գրավադրման ենթակա գույքի (տեսակի, քանակի, մոտավոր շուկայական արժեքի և գրավադրման հնարավորության առկայության) ուսումնասիրություն:

Հիմնադրամն իր ավանդների զբաղված մասի գումարի չափի մասին հիմնականում տեղեկանում է բանկերի/ՈՒՎԿ-ների կողմից ներկայացվող ամսեկան հաշվետվություններից, որոնք երբեմն ճշգրիտ չեն ներկայացնում տվյալները կամ չեն համապատասխանում բանկային հաշիվների մնացորդների տվյալներին:

«Հայաստանում կանանց ձեռներեցության զարգացման աջակցություն» ծրագրի իրականացման նպատակով Հիմնադրամին տրամադրվել է 811,840.0 հազ. դրամ գումար, որով նախատեսվել է ֆինանսական աջակցություն ցուցաբերել մինչև 300 գործող և սկսնակ ՓՄՁ սուբյեկտների, որոնց առնվազն 50 տոկոսը պետք է պատկանի

և(կամ) կառավարվի կանանց կողմից: Այդ ծրագրով ֆինանսական աջակցություն ստացել են 54 կին գործարարներ կամ ընդամենը 28%-ը, ինչը սահմանված ցուցանիշի առնվազն 50%-ի համեմատ բավականին ցածր է:

Շահառուների կողմից վարկային պայմանագրերով սահմանված վճարումների ժամկետների խախտումների հետևանքով բանկերի կողմից պահված գումարներից դեռևս չի վերականգնվել 114,993.9 հազ. դրամ:

Դրամաշնորհի պայմանագրերով նախատեսված որոշ աշխատանքներ կատարվել են սահմանվածից ցածր ցուցանիշներով:

**Մասնավորապես**՝ 2014 թվականին կնքված դրամաշնորհի տրամադրման պայմանագրով «Սկսնակ գործարարների ձեռներեցությանն աջակցություն» միջոցառման շրջանակներում ակնկալվում էր, որ 2014 թվականին ֆինանսական աջակցություն կտրամադրվի 250-300 սկսնակ գործարարի, որի արդյունքում պետք է ստեղծվեր 300-450 նոր աշխատատեղ: Վերահսկիչ պալատի կողմից պահանջված՝ նոր ստեղծված աշխատատեղերի վերաբերյալ տեղեկատվություն Հիմնադրամի կողմից չի ներկայացվել:

**<u>Բելգիական Քեյ Բի Սի էն Վի բանկի աջակցությամբ իրականացվող ռադիոիզոտոպների արտադրության արտադրամասի ստեղծում</u>**

Ծրագրով նախատեսվել է Ա. Ի. Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտի տարածքում իզոտոպների արտադրության համալիրի տեղադրում և Հայաստանի Հանրապետությունում Միջուկային բժշկության կենտրոնի ստեղծմանն աջակցություն:

Ծրագիրը պետք է մեկնարկեր 2008 թվականին և ավարտվեր 2009-2011 թվականներին՝ ավարտին հասցնելով կենտրոնի ստեղծման և կայացման աշխատանքները:

ՀՀ էկոնոմիկայի նախարարության և Այըն Բիմ էփլիքեյշնս ընկերության միջև կնքված պայմանագրի շրջանակներում ներմուծված սարքավորումների մաքսային ձևակերպումների համար նախարարության կողմից իրականացվել են վճարումներ՝ 2013 թվականին՝ 23,274.1 հազ.դրամի, 2014 թվականին՝ 339,694.1 հազ. դրամի չափով:

ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված «Ա. Ի. Ալիխանյանի անվան Երևանի ֆիզիկայի ինստիտուտ» ՊՈԱԿ-ում «Cyclone-30» իզոտոպների արտադրության համալիրի տեղադրման և Միջուկային բժշկության կենտրոնի ստեղծման ծրագրով ինստիտուտի գիտական լաբորատորիայում «Cyclone-30» ցիկլոտրոնի տեղադրման համար խոշոր կապիտալ ներդրումներ չէր պահանջվում, քանի որ դրա համար բավարար էին Երևանի ֆիզիկայի ինստիտուտի ռադիացիոն նորմերին բավարարող դահլիճներն ու ենթակառուցվածքները:

Սակայն, հետագայում ծրագիրը փոփոխվել է և «Cyclone-30» սարքավորումը փոխարինվել է «Cyclone-18/18»-ով. արդյունքում՝ ռադիոիզոտոպների արտադրության և մոլեկուլյար ախտորոշման կենտրոնի ստեղծումը հետաձգվել է:

Հետագայում պարզվում է նաև, որ Երևանի ֆիզիկայի ինստիտուտի շենքերն ու շինությունները չեն համապատասխանում քաղցկեղով հիվանդների բուժման ժամանակակից պահանջներին:

Վերահսկողությունն ընդգրկող ժամանակահատվածում կենտրոնի ստեղծման համար նախատեսված 1,741,331.4 հազ. դրամի չափով շինարարական աշխատանքները

դեռևս սկսված չէին: Շինարարության որակի և գործող նորմերին համապատասխանության հարցերին Վերահսկիչ պալատը կանդրադառնա հետագայում:

**ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարությամբ նախատեսված միջոցառումներ**

Ծրագրի հիմնական նպատակն է՝ ձևավորել տնտեսական աճի նոր շարժիչ ոլորտներ, զարգացնել վերամշակվող արդյունաբերության ճյուղերը և համալիրները:

Ծրագիրը մշակվել է ՀՀ կառավարության կողմից հաստատված ՀՀ արտահանմանն ուղղված արդյունաբերական քաղաքականության ռազմավարության հիման վրա:

Ծրագրի շրջանակներում հիմնականում իրականացվում են հայկական ապրանքների առաջմղման, արդյունաբերական ոլորտի հանրաճանաչ կազմակերպությունների ներգրավման և մուտքի ապահովման միջոցառումներ, վարկավորման սուբսիդավորում, սերտիֆիկացման համաֆինանսավորում, միջազգային ցուցահանդեսի մասնակցության ապահովում և այլ աշխատանքներ:

2013 և 2014 թվականների համար նախարարությունը կնքված դրամաշնորհային պայմանագրերով «Արդյունաբերության զարգացման հիմնադրամ»-ին (այսուհետ՝ Հիմնադրամ) հատկացրել է համապատասխանաբար՝ 463,893.9 հազ. դրամ և 501,499.6 հազ. դրամ: Հատկացված գումարներից 2013 և 2014 թվականների համար ծախսվել է համապատասխանաբար՝ 319,609.3 հազ. դրամ և 395,685.3 հազ. դրամ: Չծախսված գումարի մնացորդը յուրաքանչյուր տարվա վերջում կազմել է համապատասխանաբար՝ 144,284.6 հազ. դրամ և 105,814.3 հազ. դրամ: Հարկ է նշել, որ 2013 թվականի տարվա մնացորդը հետագայում դրվել է բանկում որպես ավանդ:

Ծրագրի արդյունավետ իրագործման, դիտանցման և կառավարման նպատակով ՀՀ կառավարության որոշմամբ նախատեսվել է մշակել նպատակային ցուցանիշների երկաստիճան համակարգ, որը պետք է բաղկացած լինի ռազմավարական և օպերատիվ նպատակային ցուցանիշներից (ըստ նախաձեռնությունների):

Վերահսկողությամբ պարզվել է, որ ցուցանիշները հետագայում սահմանվել են միայն 2013 թվականի համար, այն էլ՝ մասնակի, իսկ 2014 թվականի համար ընդհանրապես չեն սահմանվել:

**«Կայունացման դեպոզիտային հաշվի համալրում», «Բաժնետոմսերի և կապիտալում այլ մասնակցության ձեռքբերում», «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» ՓԲԸ-ի կանոնադրական կապիտալում ներդրում**

Հայաստանի Հանրապետությունում արտահանումը խրախուսելու նպատակով ՀՀ կառավարությունը ստեղծել է «Հայաստանի արտահանման ապահովագրական գործակալություն» փակ բաժնետիրական ընկերություն, որի բոլոր բաժնետոմսերը պատկանում են պետությանը:

Ապահովագրական ընկերության կանոնադրական կապիտալում ներդրում կատարելու նպատակով ՀՀ էկոնոմիկայի նախարարությանը հատկացվել է 1.95 մլրդ դրամ՝ որից կանոնադրական կապիտալի համար՝ 1.5 մլրդ դրամ, իսկ ընկերության գլխավոր պահուստի համար՝ 450 մլն դրամ:

ՀՀ կառավարության որոշման համաձայն, ծրագիրն իրագործելու համար ընկերությանն անհրաժեշտ է ապահովագրական դասի երեք լիցենզիա (վարկի ապահովագրության, երաշխիքի տրամադրման, ֆինանսական վնասների ապահովագրության),

սակայն մինչ վերահսկողության ավարտը ընկերությունը ստացել էր միայն «վարկի ապահովագրություն» դասի լիցենզիա:

Թեև ընկերությունը կատարել է ապահովագրական գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ նախապատրաստական աշխատանքներ, սակայն, ապահովագրական որևէ պայմանագիր վերահսկողության հաշվետու ժամանակահատվածում դեռևս չէր կնքել:

**Շուկայի վերահսկողության տեսչություն**

Տեսչությունում իրականացված ստուգումների արդյունքում պարզվել են մի շարք խնդիրներ, որոնք բացասաբար են անդրադարձել տեսչության գործունեության արդյունավետության վրա: Տեսչության գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով անհրաժեշտ է իրականացնել մի շարք միջոցառումներ:

**Մասնավորապես, անհրաժեշտ է՝**

- կատարելագործել թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առևտրին ներկայացվող պահանջները,
- սահմանել պարտադիր ստուգաչափման ենթակա սարքավորումների ցանկը,
- ներդնել մեխանիզմներ տեխնիկական կանոնակարգերին և նորմերին չբավարարող ապրանքների իրացումը և այդ ապրանքներով ծառայությունների մատուցումն անմիջապես կասեցնելու համար:

Հաշվի առնելով, որ Հայկական կոնյակի իսկության հավաստումը տեսչության կողմից իրականացնելը սկզբունքորեն չի բխում տեսչության գործունեության տրամաբանությունից և այն, որ, տեսչությունը չունի համապատասխան կադրային, տեխնիկական (լաբորատոր), ինչպես նաև տեղեկատվական ռեսուրսներ, ուստի Վերահսկիչ պալատը ՀՀ կառավարությանն առաջարկել է վերանայել հայկական կոնյակի իսկության հավաստումը տեսչության կողմից իրականացնելու մոտեցումը:

**ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում իրականացված վերահսկողությամբ արձանագրված խախտումները, խնդիրներն ու թերությունները մանրամասն ներկայացված են Վերահսկիչ պալատի համապատասխան ընթացիկ հաշվետվությունում:**

## 2.2. ՖԻՆԱՆՍՆԵՐ

Հաշվետու տարում Վերահսկիչ պալատը վերահսկողություն է իրականացրել ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՊՀ-ի (այսուհետ՝ ՕԻԳ) կողմից իրականացվող ծրագրերի նկատմամբ:

Վերահսկիչ պալատի կողմից 2013 թվականին ՕԻԳ-ում արձանագրված խնդիրների բնույթը վկայում էր, որ դրանք հիմնականում ռիսկային են և պետք է լինեն վերահսկողության դաշտում: Հաշվետու տարում Վերահսկիչ պալատի կողմից ընտրանքային կարգով իրականացված վերահսկողությունը եղել է հետևյալ ուղղություններով:

**«Էլեկտրոնային հասարակության և մրցունակության համար նորարարություն» վարկային ծրագրի էլեկտրոնային հասարակության ենթակառուցվածքի զարգացման բաղադրիչ**

Ծրագրի շրջանակներում նախատեսվում է ստեղծել Հավաստագրման կենտրոն, որի նպատակը առցանց գործարքներ իրականացնելու ընթացքում ՀՀ քաղաքացիների, պետական և մասնավոր հատվածի համար վստահության և անվտանգության ապահովումն է:

Այդ նպատակով ՀՀ կառավարության կողմից հիմնադրված «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ն (այսուհետ՝ ԷԿԵՆԳ) միջազգային ճանաչում ունեցող հեղինակավոր ընկերություններից ստացած առաջարկությունների հիման վրա մշակել է տեխնիկական առաջադրանք, որի հիման վրա հետագայում կազմակերպվել է մրցույթ:

Մրցույթում հաղթել է PWPW S.A. (Լեհաստան) ընկերությունը, որի հետ կնքվել է պայմանագիր 788.3 հազ. ԱՄՆ դոլար արժեքով:

Բացի լեհական ընկերությունից, մրցույթին մասնակցած ֆրանսիական «Oberthur Technologies S.A.» և շվեդական «PrimeKey Solutions A.b.» ընկերությունները ևս ներգրավված են եղել ԷԿԵՆԳ-ի կողմից տեխնիկական առաջադրանքի մշակման աշխատանքներում:

**Վերահսկողությամբ արձանագրվել է.**

Մրցույթում հաղթած լեհական «PWPW S.A.» ընկերության կողմից առաջարկած տարբերակն, ըստ էության, հիմնված է մյուս մասնակցի՝ «PrimeKey» ընկերության կողմից ստեղծված, համացանցում անվճար տարածվող EJBCA պատրաստի ծրագրի (ծրագրային լուծման) վրա:

Դեռ ավելին, հետագայում պարզվել է, որ այդ պատճառով տեխնիկական պարամետրերի տեսանկյունից լուծումները դառնում են անհամեմատելի, որովհետև անվճար տարբերակում ներառված չեն մի շարք «կատարելագործումներ» և գործառույթներ, որոնք առկա են կորպորատիվ («PrimeKey» ընկերության կողմից վաճառքի ենթակա) տարբերակում:

Ծրագրային ապահովման սկզբնակոդերի ուսումնասիրությունից պարզվեց, որ «PWPW S.A.» ընկերության կողմից առաջարկվող լուծման մեջ առկա են նաև «PrimeKey» ընկերության կողմից ստեղծված այլ պատրաստի լուծումներ՝ մասնավորապես՝ SignServer, ինչպես նաև տարբեր ընկերությունների կողմից ստեղծված մի շարք այլ անվճար լուծումներ:

Հաղթող ճանաչված «PWPW» կողմից, որպես PKI բաղադրիչ, փաստորեն, օգտագործվել է «PrimeKey» ընկերության կողմից ստեղծված EJBCA անվանումով PKI լուծման անվճար տարբերակը, որը նախատեսված է միայն լայն հանրության համար, և պարզապես, կրում է ճանաչողական և ուսուցողական բնույթ:

Արդյունքում, առաջացել են տեխնիկական խնդիրներ և Հավաստագրման Կենտրոնի ստեղծումը հետաձգվել է շուրջ մեկ տարի: Վերահսկիչ պալատի պաշտոնական հարցմանն ի պատասխան, նույնիսկ ԷԿԵՆԳ-ը հետագայում փաստում և վկայում է, որ առաջացած տեխնիկական խնդիրները կապված են նաև ծրագրային լուծումների անվճար տարբերակների կիրառման հետ, օրինակ՝ տվյալների հենքերի մի քանի սերվերների համահունչ չաշխատելու խնդիրը:

ԷԿԵՆԳ-ը չի սահմանել տեղեկատվական անվտանգության կառավարման համակարգի համար կիրառելիության տիրույթը, չի ներդրել համապատասխան համակարգ, անձնակազմը տեղեկացված չէ համակարգերի պահանջներին: Չի սահմանվել նաև ռիսկերի կառավարման և դրանց չեզոքացման պլանը, ինչպես նաև տվյալների անվտանգության ապահովման պլանը: Չի մշակվել խոցելիության կառավարման,

պատահարներին արձագանքելու պլան: Բարձր կարևորություն ունեցող անվտանգության նպատակներն, ընդհանրապես, հստակ և չափելի չեն:

**Պետական հատվածի արդիականացման երկրորդ վարկային ծրագիր**

Ընտրանքային կարգով ստուգվել է ծրագրի շրջանակներում անցկացված տարբեր մրցույթներում հաղթող ճանաչված «Ֆայն» ՍՊԸ-ի հետ կնքված 1,687.5 հազ. ԱՄՆ դոլարին համարժեք ՀՀ դրամ արժեքով թվով 7 պայմանագրի կատարման օրինականությունն ու արդյունավետությունը:

Փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ «Ֆայն» ՍՊԸ-ն մրցութային կարգով նախատեսված «Փորձառության պահանջի» ապահովման նպատակով ներկայացրել է ALTA LTD (Վրաստան) ընկերության հետ կնքված թվով 2 պայմանագիր:

«Ֆայն» ՍՊԸ-ի և ALTA LTD ընկերության միջև, համապատասխանաբար՝ 590.4 հազ. ԱՄՆ դոլարի և 352.0 հազ. ԱՄՆ դոլար արժեքով կնքված պայմանագրերում նշված ապրանքներն իրականում մատակարարվել են ՀՀ կառավարության աշխատակազմին նույն Վարկային ծրագրի շրջանակներում ALTA LTD ընկերության կողմից, որտեղ «Ֆայն» ՍՊԸ-ն ենթամատակարար չի հանդիսացել: Ավելին, «Ֆայն» ՍՊԸ-ի անունից ենթամատակարարումը հավաստող որևէ փաստաթուղթ ՕԻԳ-ում առկա չէ:

Մրցութային գործընթացի և մատակարարված ապրանքների գների ուսումնասիրությամբ առաջացած հակասությունները պարզաբանելու նպատակով Վերահսկիչ պալատը հանդիպակաց ստուգման ընթացքում ընկերությունից պահանջել է վրացական ALTA LTD ընկերության հետ կնքված ապրանքների մատակարարման ճշտությունը հավաստող փաստաթղթեր, որոնք չեն ներկայացվել: Փաստի կապակցությամբ Վերահսկիչ պալատի կողմից կազմվել է «Խոչընդոտման արձանագրություն»:

Հաշվի առնելով ՀՀ ֆինանսների նախարարության «Արտասահմանյան ֆինանսական ծրագրերի կառավարման կենտրոն» ՕԻԳ-ի կողմից իրագործվող ծրագրերի կարևորությունն ու ռիսկայնությունը, Վերահսկիչ պալատը 2015 թվականին կրկին անդրադառնալու է նշված ծրագրերի վերահսկողությանը:

**2014 թվականի ընթացքում Վերահսկիչ պալատը վերահսկողություն է իրականացրել նաև ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) կողմից պետական բյուջեի մուտքերի ապահովման գործընթացի նկատմամբ:**

Համաձայն «Վերահսկիչ պալատի մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջի, բյուջետային մուտքերի վերահսկողության նպատակով Վերահսկիչ պալատն իրավասու է վերահսկողություն իրականացնել միայն բյուջեի մուտքերն ապահովող լիազոր մարմինների կողմից կատարվող գործառույթների փաստաթղթային ստուգման միջոցով՝ առանց հարկ, տուրք, պարտադիր վճար, վարչական տուգանք, վարչարարությամբ պայմանավորված այլ վճար վճարողի մոտ ստուգում անցկացնելու:

Հետևաբար, Վերահսկիչ պալատն առավել ռիսկային ոլորտներում իրականացրել է դիտարկում՝ Կոմիտեից ստացված տեղեկատվության վերլուծության հիման վրա: Դիտարկումներն անցկացվել են հետևյալ երեք ուղղություններով.

- «Ժամանակավոր ներմուծում» և «Ժամանակավոր ներմուծում վերամշակման համար» մաքսային ռեժիմներով թվով 11 կազմակերպության կողմից 2,754,560.0 հազ. դրամի չափով ներմուծման և հետագայում դրանց վերաարտահանման կամ այլ

մաքսային ռեժիմի վերածևակերպման իրականացման գործընթացի համապատասխանությունը ՀՀ մաքսային օրենսգրքի պահանջներին:

- ՀՀ մշտական բնակության ժամանած 5 անձանց կողմից ներմուծված 276,000.0 հազ. դրամ արժողությամբ տրանսպորտային միջոցների մաքսազերծման փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ մաքսային օրենսգրքի դրույթներին:

- Միևնույն մակնիշի թվով 7 վթարված տրանսպորտային միջոցի մաքսազերծման գործընթացի համապատասխանությունը ՀՀ մաքսային օրենսդրությանը (անհրաժեշտ փաստաթղթերի առկայություն և դրանց արդյունքում մաքսային արժեքի հաշվարկում):

**Դիտարկման արդյունքում խախտումներ չեն հայտնաբերվել:**

Միաժամանակ, վերլուծությունները վկայում են, որ ներմուծողների կողմից մաքսային ձևակերպումների համար ներկայացվող հաշիվ-ապրանքագրերի արժանահավատությունը շարունակում է պարունակել զգալի ռիսկեր:

**Մասնավորապես**, պետք է նշել, որ արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող սուբյեկտների կողմից մաքսային մարմիններին ներկայացվող ապրանքների ձեռքբերման փաստաթղթերի արժանահավատությունը ստուգվում է հետբացթողումային հսկողության, հիմնականում՝ այլ երկրների մաքսային մարմիններին ուղղվող հարցումների միջոցով:

2013 թվականին թվով 35 պետությանն ուղղվել է 267 հարցում. պատասխանել է 33 երկիր՝ 160 հարցման:

Բացի այդ, գործնականում, հարցումներին առհասարակ չեն պատասխանում Չինաստանը, Թուրքիան, ԱՄՆ-ն, Հարավային Կորեան, Հնդկաստանը: Այդ երկրներից ՀՀ մաքսային տարածք ներմուծվող ապրանքների ծավալը կազմում է ընդհանուրի շուրջ 40%-ը: Նշված երկրների հարցումներին չարձագանքելու փաստը բացասաբար է ազդում բյուջետային մուտքերի հավաքագրման գործընթացի արդյունավետության վրա:

Հարցումներին մասամբ են պատասխանել Գերմանիան և Իրանը, որոնց հետ ՀՀ-ն ունի մաքսային ոլորտում համագործակցության համաձայնագրեր:

**Հաշվետու տարում Կոմիտեում, ինչպես նաև ԾԻԳ-ում իրականացված վերահսկողությամբ արձանագրված խախտումները, խնդիրներն ու թերությունները ներկայացված են Վերահսկիչ պալատի համապատասխան ընթացիկ հաշվետվություններում:**

## 2.3. ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄ

Հաշվետու տարում Վերահսկիչ պալատը վերահսկողություն է իրականացրել ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովում (այսուհետ՝ Հանձնաժողով): Հատկապես ուսումնասիրվել են Հանձնաժողովի գործառույթները, պետական բյուջեի միջոցների հաշվին կատարված ծախսերը, ինչպես նաև բյուջետային մուտքերի ապահովումը: Արձանագրվել են մի շարք խախտումներ, բացահայտվել են որոշակի խնդիրներ, ՀՀ կառավարությանն ու Հանձնաժողովին ներկայացվել են առաջարկություններ:

**Մասնավորապես՝**
**<u>Հանրային ծառայությունների կարգավորման ոլորտներ</u>**

*ա) էներգետիկա*
Հանձնաժողովի «Էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու և մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» 2013

թվականի նոյեմբերի 1-ի թիվ 374-Ն որոշմամբ սահմանվել է, որ լիցենզիա ստանալու հայտ ներկայացնող անձն էլեկտրաէներգիայի արտադրության կայանի կառուցման ժամանակահատվածի համար պարտավոր է ներկայացնել երաշխիք, իսկ լիցենզիայի պայմանները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքում պարտավոր է այդ երաշխիքից հաշվարկված գումարը (երաշխիքի 50% կամ 100%) սահմանված կարգով փոխանցել պետական բյուջե:

• Ընտրանքային ստուգման արդյունքում պարզվել է, որ առանձին կազմակերպություններ կառուցման ժամկետները խախտելու համար ֆինանսական երաշխիքից որպես տույժ պետական բյուջե չեն փոխանցել կամ պակաս են փոխանցել 48,149.5 հազ. դրամ:

**Մասնավորապես՝**

- «Տաթևի անապատ» ՍՊԸ-ի փոքր հիդրոէլեկտրակայանի մասով վճարման ենթակա գումարը կազմել է 9,399.5 հազ. դրամ, որը վերահսկողության ընթացքում ամբողջությամբ ընկերության կողմից փոխանցվել է պետական բյուջե:
- «Ամբերդ ՀԷԿ» ՍՊԸ-ի փոքր հիդրոէլեկտրակայանի մասով վճարման ենթակա գումարը կազմել է 12,287.5 հազ. դրամ, որը վերահսկողության ընթացքում ամբողջությամբ ընկերության կողմից փոխանցվել է պետական բյուջե:
- «Բուռ Գրուպ» ՍՊԸ-ի փոքր հիդրոէլեկտրակայանի մասով վճարման ենթակա գումարը կազմում է 23,275.0 հազ. դրամ:
- «Իփրա» ՍՊԸ-ի փոքր հիդրոէլեկտրակայանի մասով վճարման ենթակա գումարը կազմում է 3,187.5 հազ. դրամ:

Հաշվի առնելով վերահսկողության ընթացքում արդեն վճարված գումարների հանգամանքը, պետական բյուջե դեռևս ենթակա է վճարման 26,462.5 հազ. դրամ:

• Բացահայտվել է նաև, որ փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման ընթացքում թվով 6 կազմակերպություն տարբեր ժամանակահատվածների համար չեն ներկայացրել պահանջվող ֆինանսական երաշխիք, սակայն Հանձնաժողովը դրանց նկատմամբ վարչական վարույթներ չի հարուցել և յուրաքանչյուր դեպքի համար չի նշանակել «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 42-րդ հոդվածի 5-րդ մասի «գ» կետով սահմանված 250.0 հազ. դրամից մինչև 500.0 հազ. դրամ տուգանք:

• Արձանագրվել են դեպքեր, երբ Հանձնաժողովը, խախտելով «ՀՀ էներգետիկայի բնագավառում գործունեության լիցենզավորման կարգը հաստատելու մասին» Հանձնաժողովի 2002 թվականի հունվարի 30-ի թիվ 4-Ն և 2013 թվականի նոյմեբերի 1-ի թիվ 374-Ն որոշումների պահանջները, փոքր հիդրոէլեկտրակայանների կառուցման և արտադրության համար ընկերություններին տրամադրել է լիցենզիա առանց ջրատարների օգտագործման մասին համապատասխան պայմանագրերի առկայության:

• «Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան» ՊՈԱԿ-ի ու «ՀայՌուսկոգեներացիա» ՓԲԸ-ի կոգեներացիոն կայաններն էլեկտրաէներգիան արտադրում են բնական գազով: Թեև դրանք չեն պատկանում փոքր հիդրոէլեկտրակայաններին կամ էներգիայի վերականգնվող աղբյուրների կիրառմամբ էլեկտրաէներգիա արտադրող կայաններին, որոնց «Էներգետիկայի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի «գ» կետով տրված է արտադրվող ամբողջ էլեկտրաէներգիան գնելու երաշխիք, այնուամենայնիվ, դրանք հավասարեցվել են փոքր հիդրոէլեկտրակայաններին և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի հետ կնքած պայ-

մանագրերով վերջինս պարտավորվել է գնել այդ ընկերությունների կողմից արտադրված էլեկտրաէներգիան ամբողջությամբ:

Ընդ որում, հատկանշական է, որ նշյալ ընկերություններից «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ն էլեկտրաէներգիան գնել է շատ ավելի բարձր գնով, քան այն գնում է փոքր հիդրոէլեկտրակայաններից:

*բ) Հեռահաղորդակցություն*

Վերահսկիչ պալատը վերահսկել է նաև Հանձնաժողովի կողմից ռադիոհաճախականությունների օգտագործման թույլտվությունների տրամադրման և օգտագործման արդյունավետությունը: **Այսպես.**

- «Էլեկտրոնային հեռահաղորդակցության մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի ա) կետի պահանջի համաձայն, Հանձնաժողովը պարտավոր է ռադիոկապի առնչությամբ ռադիոհաճախականությունների տիրույթի՝ իրեն հատկացված մասից տրամադրել ռադիոհաճախականություններ որոշակի նպատակների համար: Բացի այդ, պարտավոր է այդ նպատակով հրապարակային ծանուցումից և դիտարկումների ստացումից հետո կազմակերպել ռադիոհաճախականությունների տիրույթի արդյունավետ և նպատակային օգտագործում:

Հանձնաժողովն իր 2011 թվականի մարտի 23-ի թիվ 107-Ն որոշմամբ սահմանել է մրցութային հայտով (դիմումով) կամ աճուրդի միջոցով տրամադրվող ռադիոհաճախականությունների տիրույթները: Վերահսկողությամբ պարզվել է, որ Հանձնաժողովը այդ տիրույթների տրամադրման համար մրցույթ կամ աճուրդ չի հայտարարել և չի կազմակերպել: Փաստորեն, տվյալ դեպքում պետական ռեսուրսն արդյունավետ չի կառավարվել և լրացուցիչ բյուջետային մուտքեր չեն եղել:

- 2014 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ ռադիոհաճախականությունների օգտագործման վճարի ապառքը կազմել է 42,295.6 հազ. դրամ, որն ընկերությունների կողմից ենթակա է վճարման պետական բյուջե: Վերահսկողության ընթացքում և արդյունքում 56 կազմակերպության նկատմամբ հարուցվել են վարչական վարույթներ և ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայություն է ներկայացվել 36,806.8 հազ. դրամի բռնագանձման պահանջ:

- Լիցենզավորվող գործունեություն իրականացնելու համար 24 կազմակերպությունների մասով առաջացած 52,946.3 հազ. դրամի չափոմ պետական տուրքի ապառքը ենթակա է վճարման պետական բյուջե: Այդ կազմակերպությունների նկատմամբ արդեն հարուցված են վարչական վարույթներ և ԴԱՀԿ ներկայացվել է գումարների բռնագանձման պահանջ:

- Հանձնաժողովի կողմից կանոնակարգված չէ օգտագործման տրամադրված ռադիոհաճախականությունների հաշվառումը, ինչպես նաև ՀՀ տրանսպորտի և կապի նախարարության հետ ռադիոհաճախականությունների տրամադրման, թույլտվությունների կասեցման և դադարեցման վերաբերյալ տեղեկատվության փոխանակումը:

*գ) Ջուր*

Համաձայն ՀՀ ջրային օրենսգրքի 14-րդ հոդվածի՝ ոչ մրցակցային ջրամատակարարներին ջրային համակարգի օգտագործման թույլտվություն տրամադրում է Հանձնաժողովը: Այդ նպատակով Հանձնաժողովն իր 2005 թվականի ապրիլի 15-ի թիվ 40-Ն որոշմամբ հաստատել է ջրօգտագործող ընկերություններից պահանջվող տեղեկատվության կարգն ու պայմանները:

Ստուգմամբ պարզվել է, որ «Սևան-Հրազդանյան ջրառ», «Շիրակ ջրմուղ կոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Ախուրյան-Արաքս ջրառ» և «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ներին ջրային համակարգի օգտագործման թույլտվությունները Հանձնաժողովը տրամադրել է սահմանված կարգի պահանջների խախտումով: Որոշ տվյալներ և փաստաթղթեր ընդհանրապես չեն ներկայացվել կամ ներկայացվել են թերի և ուշացումով:

**Բացի վերոգրյալ խնդիրներից, արձանագրվել են նաև ընթացակարգային խախտումներ, օրինակ՝ ստուգմամբ պարզվել է, որ Հանձնաժողովի կողմից դեռևս չեն սահմանվել «Փոստային կապի մասին» ՀՀ օրենքով նախատեսված ունիվերսալ ծառայությունների մատուցման սակագները:**

**Վերահսկիչ պալատն արձանագրել է դրական տեղաշարժ պետական բյուջեի մուտքերի ապահովման աշխատանքներում: Եթե նախորդ վերահսկողության արդյունքներով գանձման ենթակա թերհավաքված գումարը կազմել էր 378,995.8 հազ. դրամ, ապա հաշվետու ժամանակահատվածում այն կազմել է 143,391.4 հազ. դրամ, որից վերահսկողության ընթացքում վճարվել է 21,687.0 հազ. դրամ:**

**Պետական բյուջեից Հանձնաժողովին հատկացված միջոցների օգտագործման նկատմամբ իրականացված վերահսկողությամբ խախտումներ չեն արձանագրվել:**

**Հաշվետու տարում Հանձնաժողովում իրականացված վերահսկողությամբ արձանագրված խախտումներն ու թերությունները ներկայացված են Վերահսկիչ պալատի համապատասխան ընթացիկ հաշվետվությունում:**

## 2.4. ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Կրթության ոլորտում տարբեր տարիներին իրականացվող վերահսկողությամբ արձանագրված խախտումների և թերությունների վերացման և հետագայում դրանց բացառման նպատակով ՀՀ կրթության և գիտության նախարարությունը ցուցաբերել է կառուցողական մոտեցում: Արդյունքում՝ «Վերահսկիչ պալատ և վերահսկվող օբյեկտ» համագործակցության շնորհիվ բացահայտված շատ խնդիրներ վերահսկողության ընթացքում ստացել են իրենց լուծումները:

Վերահսկողությունը շարունակվել է նաև հաշվետու տարում: Ոլորտում իրականացված վերահսկողությամբ արձանագրված մի շարք խախտումներ և թերություններ վերացվել են անմիջապես վերահսկողության ընթացքում:

**<u>«Կրթության որակ և համապատասխանություն» երկրորդ վարկային ծրագիր</u>**

Ծրագիրը մեկնարկել է 2009 թվականի հունիսի 5-ին և նախատեսվում է ավարտել 2015 թվականի նոյեմբերի 30-ին: Վերահսկվող ժամանակաշրջանում 42 առանձին ծրագրի (գործողություն) համար ծրագրով կատարված դրամարկղային ծախսը կազմել է 4,281,104.2 հազ. դրամ: Թվով 42 առանձին ծրագրերից Վերահսկիչ պալատն ընտրանքային կարգով ուսումնասիրել է 26-ը:

Վերահսկողությամբ արձանագրվել են հետևյալ խախտումներն ու թերությունները.

- **«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ Հիմնադրամ) հետ կնքվել է 153,471.6 հազ. դրամ ընդհանուր արժեքով 4 պայմանագիր՝ 15 բարձրագույն ուսումնական հաստատությունների (այսուհետ՝ ԲՈՒՀ) ինստիտուցիոնալ և երկու մասնագիտությունների մասով ծրագրային փորձնական հավատարմագրման նպատակով:**

Կատարվել է 153,471.6 հազ. դրամի ծախս, սակայն չի ապահովվել հավատարմագրման գործընթացի վերջնական արդյունքն ու նպատակը, ԲՈՒՀ-ի և մասնագիտության հավատարմագրված լինելու, չլինելու կամ պայմանական հավատարմագրված լինելու վերաբերյալ հավատարմագրման հանձնաժողովի որոշման կայացումը: Հավատարմագրման գործընթաց «անցած» 15 ԲՈՒՀ-ից ոչ մեկը հավատարմագրված չի եղել:

Հիմնադրամի կողմից 10,207.9 հազ. դրամը ենթակա է վերականգման Կրթական ծրագրերի իրականացման գրասենյակի բյուջե, քանի որ վարկային միջոցներով իրականացվել է վերջինիս կողմից արդեն իսկ ԲՈՒՀ-ի (Երևանի գյուղատնտեսական համալսարան ՍՊԸ) միջոցներով իրականացված հավատարմագրման գործընթացը (հավատարմագրման հանձնաժողովի կողմից որոշում չի կայացվել):

- **Ուսուցիչների մասնագիտական զարգացման ծրագրի ազդեցության գնահատման նպատակով Բեյքեր Թիլլի Արմենիա ՓԲԸ-ի հետ կնքվել է 34,353.6 հազ. դրամի պայմանագիր:**

Հետագայում պայմանագրով նախատեսված աշխատանքների ծավալը կրճատվել է: Արդյունքում՝ պայմանագրի արժեքը պակասեցվել է ընդամենը 5,751.7 հազ. դրամով, այն դեպքում, երբ կրճատված աշխատանքի համար պայմանագրով նախատեսված արժեքը կազմել է 12,457.3 հազ. դրամ: Այսինքն՝ պայմանագրի գինը պետք է նվազեցվեր ևս 6,705.6 հազ. դրամով: Գումարը ենթակա է վերականգման ՕԻԳ-ի բյուջե:

- **Մասնագիտական կրթության կառավարման տեղեկատվական համակարգի մշակում և ներդրում ծրագրով Սիներջի ինթերնեշնըլ սիսթեմզ ԲԸ-ի (ԱՄՆ) հետ կնքվել է 72,365.4 հազ. դրամի պայմանագիր:**

Համակարգի գործելու փաստն արձանագրելու նպատակով իրականացվել են այցեր 11 հաստատություն, ինչ արդյունքում պարզվել է, որ առկա են թերություններ, որոնք անհնարին են դարձնում համակարգի լիարժեք շահագործումը:

- **Դրամաշնորհներ նախադպրոցական ծրագրեր իրականացնող հաստատություններին ծրագրով 73 հաստատության հատկացվել է 349,534.7 հազ. դրամի չափով դրամաշնորհ:**

73 հաստատությունից 22-ի կողմից ներկայացրած դրամաշնորհային հայտերը ենթակա էին մերժման, քանի որ դրանք չեն համապատասխանել «Դրամաշնորհներ նախադպրոցական կրթության միկրոծրագրերի իրականացման» ղեկավար-ձեռնարկի պահանջներին, իսկ մերժված հայտերից 10-ի մերժումը հիմնավորված չէ:

- **Որակի ապահովման պատասխանատուների և ներկայացուցիչների վերապատրաստման նպատակով Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն հիմնադրամի հետ կնքվել է 55,686.6 հազ. դրամի պայմանագիր:**

Պայմանագրով նախատեսված երեք փուլով 400 վերապատրաստվողի փոխարեն վերապատրաստվել է 337 անձ: Տեխնիկական առաջադրանքով նախատեսված պահանջը չի ապահովվել: Կատարվել է 6,894.5 հազ. դրամի անարդյունավետ ծախս:

Հիմնադրամի կողմից վերապատրաստումների համար կատարված փաստացի ծախսը կազմել է վճարվածից 476.1 հազ. դրամով պակաս, որը ենթակա է վերականգման ՕԻԳ-ի բյուջե:

**• Յուրաքանչյուր տարվա ավարտին ՕԻԳ-ի գանձապետական դրամային հաշվում առկա մնացորդը, համաձայն ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 18-ի թիվ 48 որոշման 68-րդ կետի պահանջի, չի փոխանցվել ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշվին: 2014 թվականի հունվարի 1-ին ՕԻԳ-ի գանձապետական հաշվին առկա 683,864.9 հազ. դրամը ենթակա է փոխանցման ՀՀ պետական բյուջեի համապատասխան հաշվին: Վերահսկողության ընթացքում գումարը փոխանցվել է:**

**• Նորարարությունների մրցակցային հիմնադրամի շրջանակներում թվով 10 ԲՈՒՀ-ին հատկացվել է 1,130,438.0 հազ. դրամի չափով դրամաշնորհ:**

ԲՈՒՀ-երի կողմից իրականացվող գնումների ընթացակարգերը սահմանվել են ՀՀ կրթության և գիտության նախարարի կողմից հաստատված ղեկավար-ձեռնարկով: Վերոնշյալով ԲՈՒՀ-երին հնարավորություն է ընձեռվել մինչև 100.0 հազ. ԱՄՆ դոլարի գնումներն իրականացնել գնանշման հարցման եղանակով (առանց նախապայմանի)՝ ստանալով առնվազն 3 հայտ, հաղթող ճանաչել նվազագույն գին առաջարկողին: «Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարան» ՊՈԱԿ-ը և «Թատրոնի և կինոյի ազգային ինտիտուտ» ՊՈԱԿ-ներն օգտվել են վերոգրյալից և գնումներն իրականացրել են իրենց կողմից ընտրված կազմակերպություններից, որի արդյունքում 113,051.0 հազ. դրամի արժողությամբ սարքավորումներ ձեռք են բերվել շուկայականից բարձր գներով:

**<u>«Հանրակրթության բարելավման ծրագրի նախապատրաստման համար» դրամաշնորհային ծրագիր</u>**

Ծրագրի նպատակը հանրակրթության բարելավման ծրագրի նախապատրաստմանն աջակցելն է: Ծրագիրը մեկնարկել է 2013 թվականի մայիսի 16-ին, ավարտը նախատեսվել էր 2014 թվականի սեպտեմբերի 30-ին: Վերահսկվող ժամանակաշրջանի համար ծրագրի ֆինանսավորումը կազմել է 128,494.6 հազ. դրամ:

**Վերահսկողությամբ արձանագրվել է՝**

Ծրագրի շրջանակներում պայմանագրեր են կնքվել 6 անհատների և 3 խորհրդատու կազմակերպությունների հետ:

Գնումների պլանով գործողությունների (խորհրդատվության) համար նախատեսված միջոցները հիմնավորված չեն:

Չի ապահովվել ՀՀ կառավարության 2011 թվականի հունվարի 22-ի թիվ 1356-Ն որոշման 13-րդ կետի պահանջը, այսինքն՝ չի իրականացվել շուկայական գների ուսումնասիրություն գնումների պլանով նախատեսված գների ճշտման նպատակով:

Ծառայությունների մատուցման պայմանագրային գները հիմնավորված չեն: ՕԻԳ-ը խորհրդատու կազմակերպությունների և անհատների հետ չի վարել բանակցություններ պայմանագրերի գնի և այլ պայմանների շուրջ (համաձայն Համաշխարհային բանկի «Խորհրդատուների վարձման և ընտրության» ուղեցույցի 3.7 և 5.3 կետի պահանջների) և պայմանագրերը կնքել է չհիմնավորված միջոցների չափով:

«Ինժեներ լիգա» ՓԲԸ-ի և ՕԻԳ-ի միջև կնքված պայմանագրի տեխնիկական առաջադրանքով նախատեսված 91 դպրոցների սեյսմակայունության հետազոտության իրականացման փոխարեն փաստացի իրականացվել է 72-ի դեպքում: 19 դպրոցի սեյսմակայունության հետազոտության համար վճարված 1,896.0 հազ. դրամը ենթակա է վերականգման ՕԻԳ-ի բյուջե:

Անհատ խորհրդատու Արշակ Մարգարյանի կողմից պայմանագրի տեխնիկական առաջադրանքով նախատեսված աշխատանքները չեն իրականացվել: Խորհրդատուին վճարված 3,403.0 հազ. դրամը ենթակա է վերականգման ՕԻԳ-ի բյուջե:

**Հաշվետու տարում կրթության ոլորտում իրականացված վերահսկողությամբ արձանագրված խախտումները, խնդիրներն ու թերությունները ներկայացված են Վերահսկիչ պալատի համապատասխան ընթացիկ հաշվետվություններում:**

## 2.5. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

Վերահսկողությունն իրականացվել է հետևյալ ուղղություններով.

- **«Դեղորայքի տրամադրում ամբուլատոր-պոլիկլինիկական, հիվանդանոցային բուժօգնություն ստացողներին և հատուկ խմբերում ընդգրկված ֆիզիկական անձանց» ծրագիր**

2013 թվականի համեմատ՝ 2014 թվականի կենտրոնացված կարգով դեղերի ձեռք բերման ու բաշխման համար նախատեսված միջոցները կրճատվել են 634,581.2 հազ. դրամով կամ՝ 27.2 %-ով: Այն պայմանավորված է, նախ և առաջ, դեղերի շուկայական գների անկմամբ և հատկապես «ինսուլին» դեղի ձեռքբերման նոր ընթացակարգով, որը ՀՀ առողջապահության նախարարության և Վերահսկիչ պալատի համագործակցության արդյունքն է և կիրառվում է 2013 թվականից:

Ներկայումս, «Ինսուլին» դեղատեսակը ՀՀ կառավարությունը գնում է անմիջապես արտադրողից՝ բանակցային ընթացակարգով: Հաշվետու ժամանակահատվածում ինսուլինը գնվել է «Նովո-Նորդիսկ Ա/Ս» ՍՊԸ-ից, մեկ սրվակի (10 մլ) համար վճարելով 1345 դրամ, այն դեպքում, երբ նախկինում պետությունը նույն չափաքանակի համար վճարում էր 4800 դրամ: Տարբերությունն ակնհայտ է:

Դեռ ավելին, եթե նախկինում հակադիաբետիկ դեղերը կազմել են կենտրոնացված կարգով ձեռք բերվող դեղերի շուրջ 70 %-ը, ապա նոր մոտեցմամբ այն արդեն կազմել է 51.0%: **Այս ամենն էականորեն բարձրացնում է բյուջետային միջոցների արդյունավետությունը: Փաստորեն, տարիների հետևողական վերահսկողությունն իսկապես օգտակար է եղել: Հետևաբար, անհրաժեշտ է նույն մոտեցումը կիրառել նաև այլ համանման դեղերի գնման պարագայում՝ հրաժարվելով միջնորդավորված գնումներից:**

**ՀՀ կառավարությունն, ընդունելով Վերահսկիչ պալատի առաջարկությունն, արդեն ընթացիկ վերահսկողության ժամանակ, դեղահաբերի ձեռքբերման գործընթացում նախաձեռնել է մեկ այլ դրական քայլ:**

**Մասնավորապես՝**

- ՀՀ կառավարության 2015 թվականի հունվարի 30-ի «Հայաստանի Հանրապետության կարիքների համար Դիաբետոն 60 մգ դեղի գնման 2015-2019 թվականների գործընթացը կազմակերպելու մասին» թիվ 78-Ն որոշմամբ առաջիկա 5 տարվա ընթացքում նշված դեղի գնումն իրականացվելու է անմիջապես արտադրողից՝ ֆրանսիական «Լե Լաբոռատուար Սեռվիե» ընկերությունից՝ մեկ հաբը 0,06 եվրո արժեքով՝ առանց ԱԱՀ-ի:

**Այդուհանդերձ, դեղորայքի ձեռքբերման գործընթացում դեռևս առկա են որոշ խնդիրներ: Ձեռքբերված Ինսուլինի ծավալը նախորդ ժամանակահատվածի համեմատ կրկնակի աճել է: Նման առաջանցիկ տեմպը համարժեք չէ նույնիսկ հիվանդների թվի աճի ցուցանիշին: Արդյունքում՝ բժշկական հաստատություններում արձանագրվել է**

**Ինսուլինի գերապահովվածություն**: Օրինակ՝ «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ում հաշվետու տարվա վերջնական մնացորդը կազմել է շուրջ 20000 սրվակ Ինսուլին, այն դեպքում, երբ բժշկական հաստատություններն առաջիկա մի քանի ամիսների կտրվածքով ինսուլինով ապահովված են եղել:

Գրեթե նույն պատկերն է արձանագրվել շաքարային դիաբետով հիվանդների համար նախատեսված դեղահաբերի մասով: 2014 թվականի ավարտին Դիա-զոն MR դեղի մնացորդը եղել է 1672000 հատ, այն դեպքում, երբ բժշկական հաստատություններն առաջիկա 3-5 ամիսների կտրվածքով դեղահաբով արդեն իսկ ապահովված են եղել:

**Ուսումնասիրությունները վկայում են, որ ՀՀ առողջապահության նախարարությունը բժշկական կազմակերպություններում Ինսուլինի և տարբեր տեսակի դեղահաբերի իրական պահանջարկի ձևավորման և դրան համապատասխան՝ հետագա բաշխման հարցերին պատշաճ ուշադրություն չի հատկացրել:** Արդյունքում՝ առաջացել է դեղորայքի մեծաքանակ մնացորդ: Օրինակ՝ Կոտայքի մարզի բժշկական հաստատություններում և «Երևանի քաղաքապետարանի թիվ 16 պոլիկլինիկա» ՓԲԸ-ում, որոշ դեղատեսակների մասով առաջացել է այնքան մնացորդ, որը հեշտությամբ կարող է բավարարել առաջիկա 6-14 ամիսների պահանջարկը:

Արձանագրվել են խնդիրներ նաև հիվանդների երկարատև բացակայության դեպքում նրանց հաշվառումից հանելու գործընթացում՝ չկան սահմանված ժամկետներ և չափորոշիչներ:

Դեռ ավելին, «Աշտարակի բժշկական կենտրոն» ՓԲԸ-ում չի իրականացվել շաքարային դիաբետով հիվանդների հաշվառում, տվյալների հավաքագրում և դասակարգում: Ակնհայտ է, որ նման դեպքում հակադիաբետիկ դեղորայքի իրական պահանջարկն անհնար է արդյունավետ կերպով ձևավորել:

Որոշ դեպքերում ամբուլատոր քարտերը լրացվել են ներկայացվող պահանջների խախտումներով, օրինակ՝ բացակայել են հիվանդի անձնական տվյալները, անձնագրի պատճենը, այլ անձանց կողմից դեղ ստանալու վստահագիրը, չի հաշվառվել հատկացված դեղի օգտագործման ժամանակահատվածը, չի գրանցվել հերթական դեղը ստանալու համար հիվանդի այցելության օրը: Բազմաթիվ դեպքերում հիվանդները ստացել են նախորդ ժամանակահատվածի դեղերը:

- **<u>«Հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի ծառայություններ» ծրագիր</u>**

Հայաստանի Հանրապետությունում հոգեկան և նարկոլոգիական հիվանդների բժշկական օգնության և խնամքի ծառայությունները պետության կողմից մատուցվում են անվճար:

Այդ նպատակով պետական բյուջեից 2013 թվականին վերոնշյալ ծառայությունները ֆինանսավորվել են 1,862,079.3 հազ. դրամի, իսկ 2014 թվականին՝ 2,349,516.9 հազ. դրամի չափով:

Համաձայն պաշտոնական տվյալների, 2013 թվականին հոգեկան խանգարումներով և նյարդային համակարգի և զգայական օրգանների հիվանդություն ունեցող անձանց թիվը Հայաստանի Հանրապետությունում կազմել է 46048, իսկ 2014 թվականին՝ մոտ 47000 մարդ: Վերջին տարիներին տվյալ ցուցանիշն ունի կայուն աճի միտում:

Հիվանդանոցային պայմաններում հոգեկան խանգարումներով տառապող և նարկոլոգիական մեկ հիվանդի բուժմանն ուղղված ֆինանսավորումը 2013 թվականին իրականացվել է հիմք ընդունելով նախապես մշակված գործակիցները (մեկ մահճակալ/օրվա արժեք):

**Հարկ է նշել, որ նման հաշվարկը ռիսկային է, քանի որ այն ձևավորվում է առանց գնագոյացման իրական մեխանիզմների և կողմնորոշիչ չափաքանակների գործոնների: Անհրաժեշտ իրական ծախսերի մակարդակը տվյալ մոտեցմամբ հնարավոր չէ արդյունավետ կերպով հաշվարկել և կանխատեսել. արդյունքում՝ առաջանում է բյուջետային միջոցների ոչ արդյունավետ օգտագործման ռիսկ:**

Տվյալ եզրահանգմանը Վերահսկիչ պալատը եկել էր դեռևս 2013 թվականին «Տուբերկուլոզի բժշկական օգնության ծառայություններ» ծրագրի վերահսկողության արդյունքում և ՀՀ կառավարությանն առաջարկել էր վերանայել ֆինանսավորման համակարգը և, մասնավորապես, քննարկել կատարողականի վրա հիմնված ֆինանսավորման մեթոդի նպատակահարմարությունը:

**ՀՀ կառավարությունն, ընդունելով Վերահսկիչ պալատի առաջարկությունը, 2014 թվականի ապրիլին հիմնովին փոփոխել է ֆինանսավորման կարգը: Արդյունքում՝ ՀՀ առողջապահության նախարարությունը հնարավորություն է ունենում արդյունավետ կերպով պլանավորել և կառավարել անհրաժեշտ ֆինանսական ռեսուրսները: Այսուհետ ծախսերը կլինեն ավելի չափելի, հետևաբար և՝ ավելի վերահսկելի: Դրական տեղաշարժը նույնպես հետևողական վերահսկողության, ինչպես նաև Վերահսկիչ պալատի և ՀՀ առողջապահության նախարարության համագործակցության արդյունք է:**

Վերահսկիչ պալատը տվյալ ծրագրով կատարված ծախսերի օրինականությունն ու արդյունավետությունը պարզելու նպատակով ընտրանքային կարգով ստուգումներ է իրականացրել «Նուբարաշեն հոգեբուժական կենտրոն» և «Ակադեմիկոս Ա. Հայրիյանի անվան Արմաշի ԱԿ» փակ բաժնետիրական ընկերություններում:

Գնումների գործընթացում արձանագրվել են ընթացակարգային խախտումներ:

**Մասնավորապես՝**

- Գումարն ամբողջությամբ փոխանցվել է մատակարարին մինչև փաստացի մատակարարված ապրանքի ընդունման և հանձնման մասին արձանագրություն կազմելը:
- Գնահատող հանձնաժողովները շուկայական գնի ուսումնասիրություն չեն իրականացրել և չեն համադրել ստացված գնային առաջարկների հետ:
- Առանց մրցույթ իրականացնելու, բանակցային ընթացակարգերով կոնկրետ անձանց հետ կնքվել են պայմանագրեր:
- Գնման գործընթացն իրականացվել է համապատասխան որակավորում չունեցող անձանց կողմից:

Խնդիրներ են բացահայտվել նաև բուժվողներին և խնամողներին հատկացվող սննդի ծախսերի, սննդամթերքի էներգետիկ արժեքի, կազմի և չափաքանակի որոշման գործընթացում: Օրինակ, եթե ՀՀ կառավարությունը սահմանել է, որ մեկ հիվանդի համար սննդամթերքի էներգետիկ արժեքը պետք է կազմի շուրջ 4800 կկալ, ապա վերոգրյալ հոգեբուժական կենտրոններում այդ ցուցանիշը կազմել է համապատասխանաբար՝ 3000-3300 և 3300-3800 կկալ:

Չեն պահպանվել բժիշկների և միջին բուժանձնակազմի վերապատրաստման և վերաորակավորման ժամկետները, ինչը հակասում է գործող լիցենզիայով առաջադրված պայմաններին:

- **«Դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտություններ» ծրագիր**

Ծրագրի շրջանակներում հաշվետու ժամանակաշրջանում ծառայությունների գնումը 2005 թվականից ի վեր իրականացվում է բանակցային ընթացակարգով՝ հատուկ կամ բացառիկ իրավունքի առկայության հիմքով:

Արդյունքում՝ պետական պատվերի շրջանակներում ծառայությունը հիմնականում մատուցվում է Երևան քաղաքում գործող 2-3 բժշկական հաստատությունների կողմից: Մինչդեռ, ոլորտում իրականացված ուսումնասիրությունները վկայում են, որ նման ծառայություններ մատուցող բժշկական հաստատությունների թիվը շուկայում ավելացել է և դրանք, ըստ էության, իրենց որակով չեն զիջում տարիներ շարունակ ծառայություններ մատուցող հաստատություններին:

**Այսինքն՝ կարելի է ենթադրել, որ ժամանակն է տվյալ ուղղությամբ մատուցվող ծառայության շրջանակներում գնման գործընթացն իրականացնել մրցութային եղանակով: Մրցակցությունը կարող է բարձրացնել նաև մատուցվող ծառայության որակը:**

Ծրագրի շրջանակներում մատուցվող ծառայությունների գործող կարգը լիարժեք կերպով չի ապահովում բյուջետային ծախսերի արդյունավետությունն ու դրանց հետագա վերահսկելիությունը, քանի որ գործող կարգը չունի գնագոյացման իրական մեխանիզմներ, չկան ծախսերի իրատեսական կողմնորոշիչ չափաքանակներ: Ծախսերն, ըստ էության, չափելի և հավաստի չեն, հետևաբար՝ ռիսկային են:

Մատուցված ծառայությունների շրջանակներում իրականացված համակարգչային և մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիայի հետազոտության գործընթացի օրինականության հարցերը պարզելու նպատակով ընտրանքային կարգով ստուգվել է «Ուլտրահիմիջինգ» ՍՊԸ-ն և «Արմենիա» հանրապետական բժշկական կենտրոն» ՓԲԸ-ն:

Ստուգմամբ արձանագրվել է, որ քաղաքացիների հերթագրումը կազմակերպվել է ընկերությունների ղեկավարության բանավոր ցուցումներով՝ խախտելով ՀՀ կառավարության 2004 թվականի մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման պահանջները:

Խախտվել է ՀՀ առողջապահության նախարարի 2012 թվականի թիվ 161-Ա հրամանի 10-րդ կետի պահանջը՝ կապված ներհիվանդանոցային ուղեգրման կազմակերպման հետ: Հաշվետվություններում ներկայացված և փաստացի հետազոտված հատվածների քանակների միջև 5 դեպքում արձանագրվել է անհամապատասխանություն:

**Ընթացիկ վերահսկողության ընթացքում ուսումնասիրվել է նաև «Առողջապահական» ԾԻԳ-ի կողմից կատարված գնումների գործընթացը:** Արձանագրվել են բացթողումներ և թերություններ: Խախտվել են ՀՀ կառավարության 2011 թվականի սեպտեմբերի 22-ի թիվ 1356 որոշման պահանջները: Գնումներն իրականացնելիս ձեռքբերվող ապրանքների շուկայական գնի նախնական ուսումնասիրություն չի իրականացվել:

**Հաշվետու տարում ՀՀ առողջապահության նախարարությունում և «Առողջապահական» ԾԻԳ-ում իրականացված վերահսկողությամբ արձանագրված խախտումներն ու թերություններն առավել մանրամասն ներկայացված են Վերահսկիչ պալատի համապատասխան ընթացիկ հաշվետվությունում:**

## 2.6. ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Գյուղատնտեսության ոլորտում դեռևս նախորդ հաշվետու տարում Վերահսկիչ պալատի կողմից իրականացված վերահսկողության արդյունքում արձանագրվել էին բազմաթիվ խախտումներ և թերություններ, որոնք հիմնականում վերաբերում էին գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրերին:

Այդ ծրագրերը Վերահսկիչ պալատը համարել էր ռիսկային: Հաշվետու տարում Վերահսկիչ պալատը կրկին անդրադարձել է «Գյուղական տարածքների տնտեսական զարգացման» ՕԻԳ-ի և «Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրերին:

**Գյուղական կարողությունների ստեղծում ծրագրի «Աջակցություն պտղի և ընկուզեղենի արտադրությանը» բաղադրիչ**

Նպատակն է՝ ՀՀ Տավուշի, Արագածոտնի և Վայոց Ձորի մարզերում աղքատ և փոքր սեփականատերերին հայկական մրգի և ընկուզեղենի արտադրության մեջ ներգրավելով ավելացնել նրանց կարողություններն ու եկամուտները: Այն մեկնարկել է 2011 թվականին և իրականացվում է «Հայկական միրգ» ԲԲԸ-ի կողմից: Բյուջեն կազմում է 13.5 մլն ԱՄՆ դոլար: Ֆինանսավորումը ծրագրի սկզբից մինչև 2014 թվականի ավարտը կազմել է 2.2 մլն ԱՄՆ դոլար, որի զգալի մասն ուղղվել է «Հայկական միրգ» ԲԲԸ-ի գործառնական ծախսերին: Ծրագրով ակնկալվում էր շուրջ 700 հա ծիրանի, դեղձի և ընկուզենու այգիների հիմնում՝ 400-500 մանրածավալ, աղքատ գյուղացիական տնտեսությունների հետ:

**Հաշվետու տարում Վերահսկիչ պալատը կրկին անդրադարձել է նշված խնդիրներին և արձանագրել.**

Ցածր են իրականացման տեմպերը՝ ծրագրի սկզբից կատարողականը կազմել է ընդամենը 17%:

Ամբողջովին չեն կատարվել Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի վերահսկողության առաքելության հուշագրում նշված առաջարկությունները և հանձնարարականները:

Չեն իրականացվել տնկարանի հյուսվածքային լաբորատորիայի վերանորոգման, ինչպես նաև ջրավազանի, մայր ջրատարի, կաթիլային ոռոգման համակարգերի, այգիների հակակարկտային համակարգերի և այլ էական նշանակություն ունեցող օբյեկտների կառուցման աշխատանքները:

Կաթիլային ոռոգման համակարգի ձեռքբերումը 85.7 հեկտար այգիների փոխարեն կատարվել է 4.5 հեկտարի համար:

Պլանով նախատեսվածից էականորեն պակաս են կատարվել պատվաստակալների և պատվաստացուների ձեռքբերման և պատվաստման աշխատանքները: Առկա են անհամապատասխանություններ դրանց ձեռքբերման, տեղափոխման և պատվաստման աշխատանքների համար կազմված արձանագրություններում նշված քանակների միջև: Ոչնչով չի հիմնավորվել պատվաստակալների կլոնային լինելու փաստը:

Տնկարանում և այգիներում ոռոգման ջրի առկայության պայմաններում արձանագրվել են տնկած տնկիների չորացման դեպքեր: Որոշ դեպքերում տնկած այգիները չեն համապատասխանել ծրագրով նախատեսված ինտենսիվ այգիների չափանիշներին:

Աշխատանքներ ու գնումներ կատարելիս թույլ են տրվել պլան-բյուջեով նախանշված ծավալներից և գնման պլանով նախանշված ժամկետներից շեղումներ: Առանձին դեպքում աշխատանքները կատարելու համար պայմանագիր է կնքվել համապատասխան գործունեության իրավունքի լիցենզիա չունեցող ընկերության հետ: Իրականացվել են գնումներ՝ չունենալով Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամի համաձայնությունը:

Վերահսկողության ընթացքում ի հայտ են եկել նաև այլ կարգի խախտումներ: Ծրագիրն ընթացքի մեջ է, այն դեռ չի ավարտվել: Ծրագրի նկատմամբ վերահսկողությունը շարունակվելու է նաև 2015 թվականին, հետևաբար՝ ծրագրի կատարման արդյունավետության վերաբերյալ Վերահսկիչ պալատի գնահատականը կներկայացվի 2015 թվականի տարեկան հաշվետվությունում:

**Գյուղական կարողությունների ստեղծում ծրագրի «Գյուղական ենթակառուցվածքներ» բաղադրիչ**

Նպատակն է՝ բարելավել գյուղական համայնքների անապահով բնակիչների կենսամակարդակը և ապահովել տնտեսական աճ, ինչի համար նախատեսվել է 31.0 մլն ԱՄՆ դոլար: Ներդրումներն, առայժմ, կատարվում են հանրային ենթակառուցվածքներում:

Ծրագրի սկզբից մինչև 2014 թվականի ավարտը ֆինանսավորումը կազմել է 14.7 մլն ԱՄՆ դոլար:

Վերահսկվող ժամանակաշրջանում ֆինանսավորումը կազմել է 4,280.0 մլն ԱՄՆ դոլար, որից՝ շինարարություն՝ 3,688.0 մլն ԱՄՆ դոլար, խորհրդատվություն՝ 287.7 հազ. ԱՄՆ դոլար, պահպանման ծախսեր՝ 303.9 հազ. ԱՄՆ դոլար:

Ծրագրի վերահսկողության ընթացքում Վերահսկիչ պալատն ուշադրություն է դարձրել հատկապես նախորդ վերահսկողությամբ արձանագրված խնդիրներին:

**Ընթացիկ վերահսկողությամբ արձանագրվել է.**

Թվով 32 համայնքում 2012 թվականին սկսված և չավարտված գազամատակարարման և ջրամատակարարման շինարարական աշխատանքներն ավարտվել են:

**Բացի այդ,** ***նախորդ ժամանակաշրջանում Վերահսկիչ պալատը ստուգմամբ արձանագրել էր, որ Խոզնավար, Խնածախ, Վաղատուր և Արտանիշ համայնքների գազաֆիկացման աշխատանքների ավարտից հետո նշված համայնքները չէին կարող գազաֆիկացվել, քանի որ մայր գազատարները եղել էին քայքայված և ենթակա չէին շահագործման: Այդ պատճառով «Հայռուսգազարդ» ՓԲԸ-ն չէր ընդունել այդ գազատարները:***

Հաշվետու ժամանակաշրջանում, արդեն ընթացիկ վերահսկողությամբ, Վերահսկիչ պալատը պարզել է, որ նշված խնդիրը կարգավորվում է: Մասնավորապես՝ նշված համայնքներում գազաֆիկացման հնարավորությունն ապահովելու համար միջին ճնշման գազատարների լրացուցիչ շին-մոնտաժային աշխատանքների կատարման համար 2014 թվականի նոյեմբերին կնքվել է նոր պայմանագիր՝ 173.6 մլն դրամ արժեքով: Աշխատանքները նախատեսվում է ավարտել 2015 թվականի ընթացքում:

2014 թվականի տարեկան աշխատանքային պլան-բյուջեով նախատեսվել էր ՀՀ Տավուշի, Արագածոտնի, Գեղարքունիքի և Վայոց Ձորի մարզերի թվով 25 համայնքում իրականացնել 252.8 կմ երկարությամբ գազաֆիկացման, 5.2 կմ երկարությամբ

ջրամատակարարման և մեկ խորքային հորի կառուցման աշխատանքներ: Միջազգային մրցույթի գործընթացի մեկնարկի ուշացումով պայմանավորված, այդ աշխատանքները վերահսկողության ընթացքում դեռ չէին սկսվել: Արդեն կնքված պայմանագրերով դրանք նախատեսվում է ավարտել 2016 թվականին:

Քանի որ ծրագիրը դեռ չի ավարտվել, նրա նկատմամբ վերահսկողությունը շարունակվելու է նաև 2015 թվականին: Ծրագրի կատարման արդյունավետության վերաբերյալ Վերահսկիչ պալատի գնահատականը կներկայացվի 2015 թվականի տարեկան հաշվետվությունում:

**«Շուկայավարման հնարավորություններ ֆերմերներին» ծրագրի «Ենթավարկեր» ենթաբաղադրիչ**

Ենթաբաղադրիչի նպատակն է՝ ենթավարկերի տրամադրում այն ծրագրերի համար, որոնք ուղղված են փոքր և միջին գյուղական բիզնեսի զարգացմանը, ֆերմերների և գյուղական ձեռնարկատերերի՝ շուկաներից օգտվելու հնարավորությունների բարելավմանը, գյուղական տարածքներում շուկայական ուղղվածություն ունեցող մասնավոր և հասարակական ներդրումների խթանմանը:

Աշխատանքներն իրականացնելու համար առևտրային երկու բանկից և 5 ունիվերսալ վարկային կազմակերպությունից ներկայացվել է փոխառության տրամադրման 92 հայտ:

Ֆինանսական միջոցները ԾԻԳ-ին տրամադրվել է տարեկան 0,75% տոկոսադրույքով, իսկ ԾԻԳ-ն իր հերթին բանկերին և ունիվերսալ վարկային կազմակերպություններին գումարը տրամադրել է ԱՄՆ դոլարի դեպքում՝ 4%, իսկ ՀՀ դրամի դեպքում՝ 9%, 9.75% և 10%: Բանկերը և ունիվերսալ վարկային կազմակերպությունները գյուղացիներին կամ ընկերություններին ենթավարկերը տրամադրել են ԱՄՆ դոլարի դեպքում՝ 10-14%, իսկ ՀՀ դրամի դեպքում՝ 14%-17.7% դրույքաչափերով :

Վերահսկողության ժամանակահատվածում ֆինանսավորվել է 86 ենթավարկ՝ 752.6 հազ. ԱՄՆ դոլարի և 102,550.0 հազ. դրամի չափով: Վարկային միջոցների 97%-ը տրամադրվել է ֆիզիկական անձանց:

Ենթավարկերը տրամադրելիս նախնական մոնիտորինգ հիմնականում չի իրականացվել: Արդյունքում՝ վարկի օգտագործման նպատակայնությունը պարզել հնարավոր չէր: **Օրինակ**՝ Սյունիքի մարզի Շինուհայր գյուղի բնակչին տրամադրվել է տարեկան 12% դրույքաչափով 19.3 հազ. ԱՄՆ դոլար վարկ՝ 20 կով ձեռք բերելու համար: Գյուղացին գրավադրել է իր բնակելի տունն ու հողամասը, անասնաշենքը և շահագործվող տրակտորը: Նախնական մոնիտորինգի արդյունքների բացակայության պարագայում հնարավոր չէր պարզել՝ տվյալ անձը նախապես ունեցել է կով, թե՝ ոչ: Բացի այդ, հաշվի առնելով, որ նշված ֆիզիկական անձը չունի վարկային միջոցներով կատարված ծախսը հիմնավորող որևէ փաստաթուղթ, հետևաբար հնարավոր չէր նաև պարզել, թե վարկային միջոցներն իրականում ինչ նպատակով են ծախսվել:

Ծրագրի շրջանակներում տարբեր իրավաբանական անձանց և անհատ ձեռներեցներին տրամադրված ենթավարկերից թվով 41-ի դեպքում յուրաքանչյուր ենթավարկի չափը կազմել է 30.0 հազ. ԱՄՆ դոլար և ավելի: Տրված ենթավարկերից 13-ի դեպքում տնտեսվարողը, մինչև ենթավարկի մարելը, լուծարվել կամ ժամանակավորապես դադարեցրել է իր գործունեությունը:

Ընտրանքային կարգով ուսումնասիրվել է 19 ենթավարկ, որից 11-ում շեղում չի հայտնաբերվել, իսկ 8-ը չի համապատասխանել ծրագրով սահմանված պահանջներին:

**Մասնավորապես՝**

- 50.0 հազ. ԱՄՆ դոլարը տրվել է բեռնատար մեքենա և կցորդ գնելու համար, սակայն փաստաթղթերի ուսումնասիրությունից պարզվել է, որ կցորդը չի գնվել, իսկ բեռնատարը գնված է եղել մինչև վարկ տրամադրելը:

- Ապակեպատ ջերմոց կառուցելու համար ֆիզիկական անձին տրամադրվել է 25.0 հազ. ԱՄՆ դոլարի վարկ, սակայն վերջինս այդպես էլ այն չի կառուցել: ՕԻԳ-ի կողմից իրականացված «մոնիտորինգի» փաստաթղթերով արձանագրվել է, որ անձը ստացված վարկային միջոցների հաշվին հիմնադրել է «Բերքառատ ջերմոց» ՍՊԸ-ն և մասնակցել «Ագրոբիզնեսի և գյուղի զարգացման կենտրոն» (CARD) հիմնադրամի կողմից ջերմոցների ցուցադրական տեղամասի կառուցման աշխատանքներին:

Վերահսկիչ պալատի կողմից ՀՀ ֆինանսների նախարարությանն արված հարցմամբ պարզվել է, որ «Բերքառատ ջերմոց» ՍՊԸ-ն հիմնադրված է եղել նշված վարկը ստանալուց դեռևս երկու տարի առաջ: Դեռ ավելին, ջերմոցի ցուցադրական տեղամասի կառուցման աշխատանքներին «Բերքառատ ջերմոց» ՍՊԸ-ի մասնակցության փաստը հիմնավորող որևէ փաստաթուղթ ընկերությունը չի կարողացել ներկայացնել:

- Ուշագրավ է, որ ենթավարկի տրամադրման պայմանների ակնհայտ շեղումների պարագայում, ՕԻԳ-ն իր կողմից իրականացված մոնիթորինգի հաշվետվություններում դրանց ընթացքը որակել է որպես «դրական» կամ կիրառվել է երկակի մոտեցում՝ մի դեպքում շեղումը նկատվել է, մեկ այլ դեպքում՝ ոչ :
- Որոշ դեպքերում պարզապես չի կարևորվել (անտեսվել է) ենթավարկի բուն նպատակը: Ենթավարկառուի բանավոր հայտարարությունն ընդունվել է որպես պաշտոնական հիմնավորում:
- Ենթավարկի գումարի չափի հիմնավորվածությունը մի շարք դեպքերում չի ստուգվել: Համարժեք աշխատանքների համար տրվել են տարբեր չափի վարկեր:

Քանի որ ծրագիրն ընթացքի մեջ է, այն դեռ չի ավարտվել և ծրագրի նկատմամբ վերահսկողությունը շարունակվելու է նաև 2015 թվականին, հետևաբար, ծրագրի կատարման արդյունավետության վերաբերյալ Վերահսկիչ պալատի գնահատականը կներկայացվի 2015 թվականի տարեկան հաշվետվությունում:

## «Շուկայավարման հնարավորություններ ֆերմերներին» ծրագրի «Ներդրումներ» ենթաբաղադրիչ

Ենթաբաղադրիչի նպատակն է՝ բաժնետիրական ներդրումների և փոխառությունների տրամադրման միջոցով խթանել գյուղական մանրածավալ և միջին վերամշակող կազմակերպությունների տնտեսական ակտիվությունը:

Աշխատանքներն իրականացնում է Հայաստանում գյուղական տարածքների տնտեսական զարգացման հիմնադրամը: Միջոցները տրամադրում է Գյուղատնտեսության զարգացման միջազգային հիմնադրամը (IFAD) :

Ծրագրի սկզբից մինչև ստուգման ավարտը 10 ընկերությունում կատարվել է 1,375.0 մլն դրամի ներդրում, որոնցից երեքին տրամադրվել է նաև 448.0 մլն դրամի փոխառություն:

Կնքված բաժնետոմսերի բաժանորդագրման և փոխառությունների տրամադրման պայմանագրերի շրջանակներում չեն ապահովվել բաժանորդագրման պայմանագրերով Հիմնադրամի և ընկերությունների կողմից երաշխավորված նվազագույն հիմնական գործառնական և ֆինանսական ցուցանիշները:

2014 թվականի դեկտեմբերի 1-ի դրությամբ, ներդրումների և փոխառությունների մասով վճարման ենթակա ընդհանուր շահութաբաժնի և փոխառության գումարը կազմել է 735.2 մլն դրամ, որից 229.2 մլն դրամի վճարումը ժամանակացույցի փոփոխության պատճառով հետաձգվել է: Արդյունքում, վճարման ենթակա գումարը կազմել է 506.0 մլն դրամ, որից վճարվել է 317.2 մլն դրամ: Պարտքը կազմել է 188.6 մլն դրամ, իսկ ժամկետանց օրերի տույժը՝ 32.3 մլն դրամ:

Ընտրանքային կարգով ուսումնասիրված գործերից պարզվել է հետևյալը.

- Ընկերություններից մեկում բաժնետոմսերը վաճառվել են և ներդված 200.0 մլն դրամը հետ է վերադարձվել:
- Մեկ այլ դեպքում կատարվել է 200.0 մլն դրամի ներդրում, սակայն հետագայում ընկերությունը սնանկ է ճանաչվել :
- 135.0 մլն դրամի չափով ներդրումներ կատարած երկու ընկերությունից Հիմնադրամը պահանջել է հետ գնել իրեն պատկանող բաժնետոմսերը:
- Մեկ այլ դեպքում Վերահսկիչ պալատի կողմից իրականացվող հանդիպակաց ստուգումը կասեցվել է ստուգման ենթակա ընկերության կողմից ստուգումը խոչընդոտելու հետևանքով:

Քանի որ ծրագիրը դեռ չի ավարտվել և ծրագրի նկատմամբ վերահսկողությունը շարունակվելու է նաև 2015 թվականին, հետևաբար ծրագրի կատարման արդյունավետության վերաբերյալ Վերահսկիչ պալատի գնահատականը կներկայացվի 2015 թվականի տարեկան հաշվետվությունում:

**Հաշվետու տարում գյուղատնտեսության ոլորտում իրականացված վերահսկողությամբ արձանագրված խախտումներն ու թերությունները մանրամասն ներկայացված են Վերահսկիչ պալատի համապատասխան ընթացիկ հաշվետվությունում:**

## 2.7. ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Կատարված վերահսկողական աշխատանքների արդյունքում Վերահսկիչ պալատը տարբեր ժամանակաշրջաններում արձանագրել է խախտումներ, որոնց վերաբերյալ ներկայացրել է նաև մի շարք սկզբունքային կարևոր առաջարկություններ:

Այս բնագավառում Վերահսկիչ պալատի և ՀՀ կառավարության միջև եղել է արդյունավետ համագործակցություն: ՀՀ կառավարությունն արձագանքել է Վերահսկիչ պալատի կողմից բարձրացված շատ խնդիրներին և տվել հստակ լուծումներ: Ոլորտում առկա է բարեփոխման միտում, կատարվում են մի շարք ծրագրեր, որոնց հաջող ընթացքն ու ավարտը կարող է էական նշանակություն ունենալ:

**Մասնավորապես՝**
Վերջին երկու տարիների ընթացքում ոլորտում իրականացված ստուգաչափագրական վերահսկողական աշխատանքների արդյունքների համեմատությունը նախորդ տարիների արդյունքների հետ վկայում է, որ ներկայումս ծավալային հավելագրումներ գրեթե չեն բացահայտվում:

Տվյալ ուղղությամբ դրական տեղաշարժն ակնհայտ է: Դա արդյունք է նաև Վերահսկիչ պալատի կողմից կատարվող շարունակական և հետևողական վերահսկողության:

Այդուհանդերձ, հաշվետու ժամանակաշրջանում իրականացված վերահսկողության արդյունքները փաստում են, որ դեռևս կան այլ խնդիրներ, որոնք տարիներ շարունակ մնում են առանց էական լուծումների:

**Մասնավորապես, առկա են՝**

- անորակ շինարարական աշխատանքներ,
- թերի և սահմանված կարգի խատումներով իրականացված նախագծանախահաշվային աշխատանքներ,
- շինարարական նյութերի բնութագրերի և հստակ նկարագրությունների բացակայություն նախագծանախահաշվային փաստաթղթերում,
- նախագծային և շինարարական նյութերի փորձաքննության անկատարություն,
- թերի և սահմանված կարգի խատումներով իրականացված տեխնիկական և հեղինակային հսկողություն,
- համայնքների ղեկավարների կողմից՝ առանց փորձաքննության եզրակացության առկայության, նախագծերի համաձայնեցում և շինարարական թույլտվության տրամադրում:

Հարցերն, ըստ էության, երկակի նշանակություն ունեն: Առաջինն այն է, որ տուժում է շինարարության որակը, որը հավանաբար հետագայում իր հերթին կառաջացնի նոր լրացուցիչ խնդիրներ, իսկ երկրորդը՝ ծախսված գումարները չեն ապահովում համապատասխան արդյունավետությունը:

Հատկանշական է հատկապես տեխնիկական հսկողության համակարգում տիրող վիճակը: Վերահսկված օբյեկտներում տեխնիկական հսկողությունն իրականացվել է ձևական, որոշ դեպքերում կոպիտ սխալներով կամ թերի:

Երբեմն, ըստ փաստաթղթերի, մեկ տեխնիկական հսկողը այնպիսի աշխատանքային ծավալ է իրականացրել, որ գործնականում դա պատկերացնել նույնիսկ հնարավոր չէ: Աշխարհագրական բացարձակապես տարբեր վայրերում մեկ հսկողն, իբրև թե, կարողացել է մեկ օրում լինել մի քանի օբյեկտներում, դեռ ավելին, նույնիսկ այդ պարագայում՝ բոլոր օբյեկտներում կատարել է պատշաճ հսկողություն:

Ակնհայտ է, որ նման գործընթացը, պարզապես, կրել է ձևական բնույթ: Արդյունքում՝ չի պահպանվել նաև շինարարության որակը:

Այդ առումով, պետական գնումների շրջանակներում Վերահսկիչ պալատի կողմից կատարված առաջարկության հիման վրա ՀՀ կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշմամբ նախատեսվել էր շինարարական ծրագրերի կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող անձի հետ կընքվող պայմանագրով սահմանել դրույթ, ըստ որի, եթե երաշխիքային ժամկետի ընթացքում բացահայտվում են թերություններ, ապա տեխնիկական հսկողություն իրականացնող անձը պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ պատվիրատուի կողմից

իրականացված փաստացի ծախսերի չափով: Սակայն, վերահսկողությամբ պարզվում է, որ հիմնականում դա չի պահպանվում:

Վերահսկիչ պալատը կրկին պնդում է իր՝ տեխնիկական հսկողություն իրականացնող անձանց հետ կնքվող բոլոր պայմանագրերում ֆինանսական պատասխանատվության մեխանիզմ նախատեսելու մասին առաջարկը:

Հաշվետու տարում շինարարական աշխատանքների նկատմամբ ընտրանքային կարգով վերահսկողությունն իրականացվել է հետևյալ ուղղություններով.

- Աբովյանի, Գավառի բժշկական կենտրոնների, Ալավերդու բժշկական կենտրոնի պոլիկլինիկական մասնաշենքերի, «Էրեբունի բժշկական քոլեջ» ՊՈԱԿ-ին պատկանող 2-րդ մասնաշենքի վերակառուցում,
- Կոտայքի և Շիրակի մարզպետարանների կողմից իրականացված շինարարություն, հիմնանորոգում և վերանորոգում,
- Մաշտոցի հարկային տեսչության վարչական շենքի վերակառուցում:

Շինարարական աշխատանքների որակի, նախագծերի մշակման, դրանց փորձաքննության, տեխնիկական և հեղինակային հսկողության հետ կապված արձանագրված խնդիրները կրկնվում են գրեթե բոլոր վերահսկվող օբյեկտներում:

Նախորդ տարիներին Վերահսկիչ պալատն անդրադարձել էր դպրոցաշինության ծրագրերին, որոնց կապակցությամբ բացահայտվել էին մի շարք սկզբունքային խնդիրներ: Այդ առումով, վերահսկողության հետևողականության սկզբունքից ելնելով, Կոտայքի մարզում հաշվետու ժամանակաշրջանում արձանագրվել է.

- Թվով 18 դպրոցի վերանորոգման աշխատանքները տարիներ շարունակ չեն ավարտվում: Ավելին, հստակեցված չեն պայմանագրերով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետները: **Նման մեթոդով իրականացվող դպրոցաշինության ծրագիրը հարցականի տակ է դնում պետական միջոցների ծախսման արդյունավետությունը:**
- Թվով 6 օբյեկտի հիմնանորոգման աշխատանքների նախագծերն ու շինարարությունն իրականացվել է առանց շենքերի տեխնիկական վիճակի վերաբերյալ մասնագիտական եզրակացության առկայության:

Ընդհանուր առմամբ, թվով 49 օբյեկտի նախագծային աշխատանքներն իրականացվել են ոչ պատշաճ մակարդակով, ինչը հանգեցնում է աշխատանքների ընթացքում ծավալների էական փոփոխությունների:

Հիմնանորոգման ծրագրերում կատարվել են չներառված օբյեկտների նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման աշխատանքներ:

Շինարարական աշխատանքների ընթացքում փոփոխությունները կատարվել են սահմանված կարգի պահանջների խախտումներով:

Շինարարության ոլորտում իրականացված վերահսկողության արդյունքները թեև վկայում են, որ այլևս չկան ծավալային հավելագրումներ, այդուհանդերձ, դեռևս առկա են լրջագույն խնդիրներ, որոնք, հատկապես արտացոլված և կենտրոնացված են շինարարության ծրագրավորման և նախագծանախահաշվային փաստաթղթերի

կազմման փուլերում, ինչպես նաև, շինարարության անկատար և ոչ կենսունակ հսկողության համակարգում:

Այդ առումով, Վերահսկիչ պալատը կրկին պնդում է իր մեկ այլ անչափ կարևոր առաջարկություն, որը թերևս կարող է առանցքային լինել ոլորտի բարեփոխումների հաջող ընթացքի համար:

**Մասնավորապես՝**
Վերահսկիչ պալատը ՀՀ կառավարությանն առաջարկում է վերանայել շինարարական նախագծերի նախահաշիվներում կիրառվող տոկոսադրույքները:

Շինարարությունում կիրառվող վերադիր ծախսերը և շահույթը պետք է հաշվարկել միայն աշխատավարձից, այլ ոչ թե՝ նյութական ծախսերից: Եթե գործող կարգով ուղղակի ծախսերի վրա կիրառվում է միջինը 83%, ապա Վերահսկիչ պալատի տարբերակով այն կազմում է միջինը 64%:

Միաժամանակ պետք է նշել, որ Վերահսկիչ պալատի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տոկոսադրույքների վերանայումը որևէ կերպ չի կարող բացասաբար ազդել շինարարության որակի վրա: Արդյունքում՝ պահպանելով որակը, պետությունը յուրաքանչյուր տարի կարող է տնտեսել նախատեսված շինարարության ծավալի 19%-ի չափով գումար:

**Հաշվետու տարում պետական մարմինների և գերատեսչությունների կողմից բյուջետային միջոցների հաշվին իրականացված շինարարական աշխատանքների նկատմամբ իրականացված վերահսկողությամբ արձանագրված խախտումներն ու թերությունները ներկայացված են Վերահսկիչ պալատի համապատասխան ընթացիկ հաշվետվություններում:**

## 2.8. ՃԱՆԱՊԱՐՀԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

Հաշվետու տարում Վերահսկիչ պալատը վերահսկողություն է իրականացրել նաև ճանապարհաշինարարական մի շարք ծրագրերում: Վերահսկողությունն իրականացվել է հիմնականում դիտարկման և վերլուծության ձևով: Իրականացվել է նաև ընտրանքային ստուգում: Արձանագրվել են որոշ խախտումներ և դրանք իրենց բովանդակային նշանակությամբ հիմնականում համընկել են քաղաքաշինության ոլորտում բացահայտված խնդիրներին և հարցերին:

**Մասնավորապես՝**

**<u>Պետական նշանակության ավտոճանապարհների հիմնանորոգում</u>**

- Չեն իրականացվել աշխատանքներն ընդունելու համար նորմերով սահմանված բոլոր փորձարկումները:
- Չի վերահսկվել օգտագործվող բիտումի երաշխիքային պիտանելիության ժամկետը:
- Թվով 9 պայմանագրի շրջանակներում աշխատանքների ընթացքում կատարվել են ծավալների փոփոխություններ:
- Աշխատանքների ընթացքում փոփոխությունները կատարվել են սահմանված կարգի պահանջների խախտումներով:

**Ավտոճանապարհների պահպանում և շահագործում**

- Ավտոճանապարհների պահպանման և շահագործման ընթացքում ճանապարհների վիճակների գնահատումները կատարվել են սահմանված ժամկետների խախտումով:
- Ճանապարհների վիճակի գնահատման ժամանակ հաշվի չեն առնվել լրացուցիչ ցուցանիշները:
- Վիճակը վատ գնահատված ավտոճանապարհները չեն ներառվել հիմնանորոգման ծրագրերում, որը լրացուցիչ դժվարություններ է առաջացնում անվտանգ և ապահով երթևեկության համար:

**Կենսական նշանակության ճանապարհացանցի բարելավում**

- Չեն իրականացվել աշխատանքներն ընդունելու համար նորմերով սահմանված բոլոր փորձարկումները:
- Չի վերահսկվել օգտագործվող բիտումի երաշխիքային պիտանելիության ժամկետը:
- Նախագծային աշխատանքներում որոշակի բացթողումները և ճանապարհահատվածի ուղեծրի փոփոխությունը հանգեցրել են աշխատանքների ծավալների փոփոխությունների:
- Աշխատանքների ընթացքում տեխնիկական հսկողությունն իրականացնող ընկերության կողմից արձանագրվել են գործող նորմերից շեղումներ, որոնք վերացվել են կապալառուի հաշվին լրացուցիչ աշխատանքներ իրականացնելով:

**Երևանի քաղաքապետարանի կողմից ավտոճանապարհների, փողոցների և մայրուղիների կառուցում, վերանորոգում և հիմնանորոգում**

- Ծրագրով նախատեսված աշխատանքների ծավալներն ու վերանորոգվող տեղամասերը հաճախակի ենթարկվում են փոփոխության:
- Պայմանագրերում չեն նշվել աշխատանքների իրականացման հստակ վայրերն ու կատարման ենթակա ծավալները:
- Շինարարական նորմերով և կանոններով որպես առանձին աշխատանք հանդիսացող աշխատանքները ծավալաթերթում խմբավորվել են միմյանց հետ և ներկայացվել որպես մեկ խմբավորված աշխատանք:

Երևանի քաղաքապետարանում վերահսկողությամբ ծավալային հավելագրումներ նույնպես չեն հայտնաբերվել: Դեռ ավելին, փողոցների վերակառուցման և հիմնանորոգման աշխատանքների պայմանագրային գները շուրջ 37%-ով էժան են եղել այդ աշխատանքների նախահաշվային արժեքից: Ակնհայտ է, որ տվյալ ոլորտում նույնպես առկա է դրական տեղաշարժ, ինչը պայմանավորված է նաև Վերահսկիչ պալատի կողմից իրականացվող հետևողական վերահսկողությամբ:

**Վերոգրյալ խախտումների, թերությունների և խնդիրների վերաբերյալ առավել մանրամասն տեղեկատվությունը ներկայացված է Վերահսկիչ պալատի ընթացիկ հաշվետվությունում:**

## 2.9. ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Վերջին տարիներին Վերահսկիչ պալատը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում տեղական ինքնակառավարման և տարածքային կառավարման ոլորտում վերահսկողությունն իրականացրել է միաժամանակ մի շարք մարզերում: Այսինքն, ձգտելով վերահսկողության շրջանակն ընդգրկել հանարավորինս շատ մարզեր՝ վերահսկողական աշխատանքներն իրականացվել են միաժամանակ տարբեր մարզերի որոշ (ոչ շատ) համայնքներում:

Հաշվի առնելով Վերահսկիչ պալատի աշխատանքային ռեսուրսների սահմանափակ լինելն ու վերահսկողության ենթակա գործարքների ընդգրկուն ծավալները, նման վերահսկողությունը մշտապես կրել է ընտրանքային բնույթ:

Այդուհանդերձ, տարբեր տարիներին արձանագրվել են խախտումներ, բացահայտվել են մի շարք կարևոր խնդիրներ և ռիսկեր: Եղել են մի քանի տասնյակ առաջարկություններ, որոնց զգալի մասն ընդունվել է թե պետական և թե համայնքային մարմինների կողմից:

2014 թվականին Վերահսկիչ պալատը տվյալ ոլորտում փոխել է վերահսկողության պլանավորման իր մոտեցումը:

**Մասնավորապես՝** հաշվետու տարում Արմավիրի մարզն ընտրվել է որպես վերահսկողության միակ ուղղություն: Նման մոտեցմամբ Վերահսկիչ պալատը մարզպետարանում և համայնքներում կարողացել է իրականացնել ավելի խորը և համապարփակ վերահսկողություն: Ակնկալվում է, որ տվյալ մոտեցումը կլինի շարունակական:

Վերահսկողության ընթացքում դիտարկվել են մարզպետարանի կողմից իրականացված բոլոր գործարքները և բոլոր համայնքները: Նախապես մշակված հարցաշարերի միջոցով ստացված ողջ տեղեկատվությունն ամբողջությամբ վերլուծվել է, որի արդյունքների հիման վրա ընտրվել են առավել ռիսկային համայնքներն ու գործարքները, որտեղ էլ Վերահսկիչ պալատն իրականացրել է «ստուգումներ»:

Ստուգվել են հետևյալ համայնքները՝ Արգավանդ, Մյասնիկյան, Մայիսյան, Գետաշեն, Լեռնագոգ, Արմավիր (գյուղ), Փշատավան, Այգեվան, Երվանդաշատ, Քարակերտ, Նալբանդյան, Գեղակերտ, Դողս, Ջրարբի, Նոր Կեսարիա, Ակնալիճ, Ամբերդ, Հովտամեջ, Ծաղկալանջ, Գայ: Ստուգմամբ արձանագրվել են մի շարք խախտումներ:

**Մասնավորապես՝**

- Ունենալով հողի հարկի և գույքահարկի գծով ապառքներ՝ տեղական ինքնակառավարման մարմինները հաշվի չեն առել «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 7-րդ կետի ե) ենթակետի պահանջը, 2013 թվականի բյուջեները պլանավորելիս չեն ներկայացրել հողի հարկի և գույքահարկի ապառքների կառուցվածքը և չեն կատարել դրանց համեմատական վերլուծություն: 2013 թվականի հողի հարկի գծով առաջացել է 46,673.0 հազ. դրամի, իսկ գույքահարկի գծով՝ 18,663.7 հազ. դրամի ապառք:

- Հողի հարկի և գույքահարկի բազաներից դուրս են մնացել առանձին կառույցներ: **Օրինակ՝** Մայիսյան համայնքում 83.76 հա հողատարածքն (կառուցված շենք-շինություններ) ընդհանրապես պետական գրանցում չի ստացել. արդյունքում՝ չի համարվել գույքահարկ և հողի հարկ վճարող և չի վճարել համապատասխան հարկեր:

Թվով 10 հասարակական օբյեկտներին (խանութ) պատկանող շենքերի, շինությունների նախկին գործառնական նշանակությունը չի փոխվել (բնակելի նշանակության է), որի արդյունքում համայնքի բյուջեն զրկվել է գույքահարկից:

Մի շարք հողօգտագործողներ խախտել են պայմանագրային պարտավորությունները: Հաշվարկվել և ստուգմամբ արձանագրվել է 23,649.6 հազ. դրամի ապառքի և տույժի գումար, որը ենթակա է վճարման համայնքների բյուջե:

- Խախտվել են «Տեղական տուրքերի և վճարների մասին» ՀՀ օրենքի պահանջները, համայնքներում չի գանձվել 2,139.8 հազ. դրամ տեղական տուրք:

- Խնդիրներ կան աղբահանության գործընթացում: Խախտվել են «Աղբահանության և սանիտարական մաքրման մասին» ՀՀ օրենքի պահանջները: Աղբը չի տեղադրվել օրենսդրությամբ սահմանված կարգով արտոնագրված աղբավայրերում: Աղբահանության վճարների դրույքաչափերը հաստատվել են՝ խախտելով նշված օրենքի պահանջները:

Մարզի առանձին համայնքներում՝ ըստ ավագանու որոշման, սահմանված աղբահանության վարձավճարները 1,518.4 հազ. դրամի չափով պակաս են հավաքագրվել համայնքային բյուջեներ՝:

- Արգավանդ համայնքում ինքնակամ շինությունների չօրինականացման արդյունքում համայնքի բյուջեն զրկվել է 795.4 հազ. դրամ լրացուցիչ եկամուտից:

- Առկա է նաև ջրի վարձավճարի հավաքման խնդիր: Այդ մասով համայնքային բյուջեներ չի գանձվել 11,092.5 հազ. դրամ գումար:

**Արմավիրի մարզպետարան**

- *<u>Բժշկական հաստատություններ</u>*

«Զ.Մ. Մկրտչյանի անվան Արմավիրի բժշկական կենտրոն» և «Վաղարշապատի հիվանդանոց» փակ բաժնետիրական ընկերություններում հիվանդներին պետպատվերով բուժօգնություն ցուցաբերելիս որոշ դեպքերում ախտորոշումները չեն հիմնավորվել պատմագրերում առկա համապատասխան բժշկական փաստաթղթերով: 675.0 հազ. դրամը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:

Արմավիրի բժշկական կենտրոնի հետ կնքված պայմանագրերի հիման վրա համապատասխան դեղատոմսերով անվճար և արտոնյալ պայմաններով հիվանդներին դեղորայքի տրամադրման ժամանակ որոշ դեղատոմսերի ետևի մասում համապատասխան նշում չի կատարվել: Արդյունքում՝ խախտվել է ՀՀ առողջապահության նախարարի 2005 թվականի հունվարի 1-ի թիվ 74 հրամանով հաստատված կարգի 4.8 կետի պահանջը, համաձայն որի, դեղատոմսի ետևի մասում դեղորայք ստացողը նշում է կատարում ստացված դեղի և վճարված գումարի մասին:

- *<u>Կրթական հաստատություններ</u>*

«Վաղարշապատի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 2 հատուկ (օժանդակ) դպրոց» և «Արմավիրի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ-ներում երեխաների հաճախումների ստուգմամբ պարզվեց, որ բացակայող երեխաների համար ֆինանսավորված սննդի գումարը կազմում է 1,077.6 հազ. դրամ, որը ենթակա է վերականգնման ՀՀ պետական բյուջե:

Հաշվետու ժամանակաշրջանում սննդամթերքի որոշակի խմբաքանակ գնվել է ՀՀ ֆինանսների նախարարի կողմից սահմանված համապատասխան ապրանքատեսակների գնային առավելագույն շեմից բարձր գներով:

«Արմավիրի մտավոր թերզարգացում ունեցող երեխաների թիվ 1 հատուկ (օժանդակ) դպրոց» ՊՈԱԿ-ում 2013թ.-ին գնումներն իրականացնող մրցութային հանձնաժողովը հաղթող է ճանաչել «Տիսա» ՓԲԸ-ին, այն դեպքում, երբ Շ. Հարությունյան Ա/Ձ-ի գնային առաջարկում որոշ սննդամթերքի մասով գինն ավելի ցածր է եղել:

- *Սոցիալական ծառայության տարածքային գործակալություններ*

Վաղարշապատի, Արմավիրի և Բաղրամյանի սոցիալական ծառայության տարածքային գործակալություններում արձանագրվել են մի շարք խախտումներ. արդյունքում՝ ավել է վճարվել 1,177.0 հազ. դրամ գումար, որից պետական բյուջե ենթակա է վերականգնման 1,014.5 հազ. դրամը:

**Հաշվետու տարում Արմավիրի մարզպետարանում և Արմավիրի մարզի համայնքներում իրականացված վերահսկողությամբ արձանագրված խախտումներն ու թերությունները ներկայացված են Վերահսկիչ պալատի համապատասխան ընթացիկ հաշվետվություններում:**

## 2.10. ԸՆԴԵՐՔՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ

Վերահսկիչ պալատը վերահսկողություն է իրականացրել նաև ընդերքօգտագործման ոլորտում: Արձանագրվել են մի շարք խախտումներ և թերություններ: Բացահայտվել են խնդիրներ, որոնց լուծման վերաբերյալ ներկայացվել են առաջարկություններ:

Վերահսկողությունն իրականացվել է հետևյալ ուղղություններով.

**ՀՀ տարածքում ընդերքի օգտագործման տրամադրման գործընթաց**

Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու դիմումի վերաբերյալ որոշման կայացման գործընթացը կարգավորվում է «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածով, ըստ որի, լիազոր մարմինը դիմումի գրանցման օրվանից հետո՝ 45 օր ժամկետում, որոշում է ընդունում դիմումի վերաբերյալ: Եթե սահմանված ժամկետում լիազոր մարմինը դիմումի վերաբերյալ որոշում չի ընդունում, ապա դիմումը համարվում է բավարարված, իսկ լիազոր մարմնի իրավասու անձն օրենքով սահմանված կարգով կրում է պատասխանատվություն:

ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և/կամ Ընդերքի տրամադրման գործակալության կողմից հաշվետու ժամանակաշրջանում թվով 95 ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման ապահովման, ինչպես նաև հանքային իրավունքի վերաձևակերպման գործընթացում ընտրանքային վերահսկողությամբ (ուսումնասիրվել է 49-ը) 32 դեպքում արձանագրվել են խախտումներ և թերություններ:

**Մասնավորապես՝**

| Տարի | Օգտակար հանածոների արդյունահանման նպատակով տրված երկրաբանական ուսումնասիրության իրավունք (քանակ) | | | Վերահսկողության ընտրանքային շրջանակ («իրավունքի» քանակ) | Վերահսկողությամբ արձանագրված խախտումներ և թերություններ («իրավունքի» քանակ) | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | *մետաղական* | *ոչ մետաղական* | **Ընդհ.** | | *մետաղական* | *ոչ մետաղական* | **Ընդհ.** |
| 2012 | 27 | 12 | **39** | **15** | 9 | 1 | **10** |
| 2013 | 24 | 22 | **46** | **28** | 9 | 7 | **16** |
| 2014 | 5 | 5 | **10** | **6** | 1 | 5 | **6** |

Արձանագրված խախտումների և թերությունների շարքում առանձնանում են մի շարք դեպքեր, երբ դիմումից մինչև որոշման կայացում տևել է 100 և ավելի օր, մինչդեռ սահմանված առավելագույն ժամկետը 45 օր է: **Որպես օրինակ կարելի նշել.**

| Դիմորդ | Դիմումի ներկայացման ժամկետ | Ծանոթություն |
|---|---|---|
| «Պանարաքաս Միներալս» ՍՊԸ | 04.02.2013թ | դիմումը բավարարվել է ուշացումով՝ 296 օր հետո |
| «Մեթըլ Փրինս էլ Թի Դի Հայաստան» ՍՊԸ | 14.03.2012թ | դիմումը բավարարվել է ուշացումով՝ 289 օր հետո |
| «Օփուլենթ Թրեյդինգ Սոլյուշենս» ՓԲԸ | 19.01.2012թ | դիմումը բավարարվել է ուշացումով՝ 266 օր հետո |

Ուշագրավ է, որ ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից օգտակար հանածոների արդյունահանման նպատակով երկրաբանական ուսումնասիրության իրավունք հայցելու «որոշ» դիմումներ բավարարվել են զգալի սեղմ ժամկետում ( 6 օր, 20 օր, 24 օր, 30 օր և այլն):

Միևնույն ժամանակ պետք է նշել, որ վերաձևակերպման դիմում ներկայացնելու համար սահմանվել էր 12 ամիս ժամկետ, իսկ դիմումից մինչև վերաձևակերպման ավարտը ժամկետը չի սահմանափակվել, սակայն միևնույն ժամկետներում ներկայացված վերաձևակերպումների տևողությունները եղել են խիստ հակասական: Արդյունքում, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից խախտվել են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» 7-րդ հոդվածի պահանջները (Կամայականության արգելք): Որպես օրինակ կարելի է նշել.

- «Դանդի Փրիշս Մեթալս Կապան» ՓԲ և «Պարամաունդ Գոլդ Մայնինգ» ՍՊ ընկերությունները, գրեթե միաժամանակ (3 օրվա տարբերությամբ) դիմել են ընդերքօգտագործման իրավունքի վերաձևակերպման համար: «Դանդի Փրիշս Մեթալս Կապան» ընկերության իրավունքը վերաձևակերպվել է 172 օր հետո, իսկ «Պարամաունդ Գոլդ Մայնինգ» ընկերության ընդերքօգտագործման իրավունքի վերաձևակերպումը տևել է ընդամենը մեկ օր:

Արձանագրվել են դեպքեր, երբ խախտելով «Ընդերքի մասին» ՀՀ օրենսգրքի 40-րդ հոդվածի պահանջները, մի շարք ընկերությունների հայտեր մերժվել են թույլատրելի՝ 45 օր ժամկետից շատ ավելի ուշ, մինչդեռ դրանք օրենքի ուժով պետք է բավարարված լինեին: Որպես օրինակ կարելի է նշել.

- «Սթոուն Լենդ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է դիմումի գրանցման օրվանից 345 օր հետո,
- «Արև 2» ՍՊԸ-ի հայտը մերժվել է դիմումի գրանցման օրվանից 83 օր հետո:

Փաստորեն, ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարության և/կամ Ընդերքի տրամադրման գործակալության կողմից հաշվետու ժամանակահատվածում ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման ապահովման, ինչպես նաև հանքային իրավունքի վերաձևակերպման գործընթացում կիրառվել է խտրական մոտեցում:

## Ընդերքօգտագործման ոլորտում Ընդերքի պետական տեսչության կողմից իրականացված ստուգումներ

Վերահսկողության արդյունքում արձանագրվել է, որ ՀՀ մարզեր գործուղված Տեսչության պաշտոնատար մի շարք անձանց պարտականությունների կատարումը որոշ դեպքերում կրել է ձևական բնույթ:

Հաշվետու ժամանակահատվածում Տեսչության կողմից թվով 295 ընդերքօգտագործողի մոտ իրականացված ստուգման նյութերի ուսումնասիրությամբ 114-ի դեպքում Վերահսկիչ պալատն արձանագրել է տեսչական ստուգումների իրականացման և համապատասխան փաստաթղթավորման գործընթացում մի շարք թերություններ, խախտումներ և անհամապատասխանություններ: Խախտվել են «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի, ինչպես նաև «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքի 55-րդ հոդվածի պահանջները: Օրինակ՝ տեսուչն ընդգրկվել է ստուգման հանձնարարագրում և գործուղվել է ստուգման վայր, սակայն չի ստորագրել ստուգման համապատասխան ակտը:

Բացի այդ, վերահսկողությամբ պարզվել է, որ Ընդերքի պետական տեսչությունը ստուգումների ընթացքում կիրառել է **սխալմունքի անհայտ աստիճանով մարկշեյդերական չափագրման համար անհրաժեշտ սարք/սարքավորումներ**: Այսինքն, առկա է տեսչական ստուգումների արդյունքների արժանահավատության խնդիր, քանի որ ստուգող սարքերը մինչև ստուգումներ սկսելը սահմանված կարգով ստուգաչափման ենթարկված չեն եղել: Դեռ ավելին, պարզվել է, որ հաշվետու ժամանակահատվածում Տեսչությունն ընդհանրապես չի ունեցել նման սարքեր: Ըստ տեսուչների մեկնաբանության, սարքերն օգտագործվել են «մասնավոր» անձանց միջոցով:

## Ընդերքօգտագործողների մոտ Վերահսկիչ պալատի կողմից իրականացված ընտրանքային ստուգումներ

Ընտրանքային կարգով Վերահսկիչ պալատն ընդերքի օգտագործման օրինականության ստուգում է անցկացրել մի քանի ընկերություններում և արձանագրել տարաբնույթ խախտումներ ու թերություններ:

**Մասնավորապես՝**

- Լիարժեք չեն կատարվել ընդերքօգտագործման պայմանագրերով ստանձնած ներդրումներին վերաբերող պարտավորությունները:
- Բացահայտված թերություններն ու անհամապատասխանություններն անմիջապես չեն վերացվում կամ չեն համապատասխանեցվում փաստացի իրավիճակին. ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պայմանագրերում չեն կատարվում համապատասխան փոփոխություններ:
- Տարիներ շարունակ կատարվում են ընդերքի տեղամասի երկրաբանական ուսումնասիրության աշխատանքներ, սակայն արդյունքները չեն ներկայացվում պաշարների հաստատման համար:
- Առանձին թույլտվություններով մի քանի ընդերքօգտագործողներ շահագործել են միևնույն հորատանցքը:
- Արդյունաբերական (շշալցման) և բուժական նպատակներով արդյունահանված հանքային ջրի փաստացի չափաքանակը քիչ է ընդերքօգտագործող ընկերությունների լիցենզիայով տրամադրված չափաքանակից:
- Ընդերքն օգտագործվել է առանց հողատարածքի վարձակալության պայմանագրի:

**Հաշվետու տարում ընդերքօգտագործման ոլորտում իրականացված վերահսկողությամբ արձանագրված բոլոր խախտումները, խնդիրներն ու թերությունները ներկայացված են Վերահսկիչ պալատի համապատասխան ընթացիկ հաշվետվությունում:**

## 2.11. ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻ ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱՆՑՈՒՄ

Հաշվետու տարում վերահսկողություն է իրականացվել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի համակարգում: Արձանագրվել են որոշ խախտումներ և խնդիրներ, որոնք կարելի է խմբավորել հետևյալ կերպ.

- Անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման գործընթացում կիրառվել է երկակի ստանդարտ և մոտեցում:
- Չափագրում իրականացնող մասնավոր ընկերություններին լիցենզիայի տրամադրման գործընթացն ունի կանոնակարգային խնդիր: ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից այդ գործընթացի նկատմամբ իրականացվող հսկողությունն ունի բարելավման անհրաժեշտություն:
- Հողերի նպատակային և գործառնական նշանակության փաստացի օգտագործման նկատմամբ հսկողությունն ունի բարելավման անհրաժեշտություն:
- Հողամասերի փաստացի չափերը իրավահաստատող փաստաթղթերում նշված չափերից պակաս լինելու դեպքում հողամասի նկատմամբ փաստացի պակաս չափերով իրավունքների պետական գրանցման հաշվառում չի իրականացվում:

Եթե նախորդ հաշվետու տարում ընտրանքային կարգով ստուգվել էր միայն «Երևան» տարածքային ստորաբաժանման կողմից կատարված գործարքները, ապա հաշվետու տարում ստուգվել են Գեղարքունիքի և Շիրակի մարզային ստորաբաժանումները:

**Մասնավորապես՝**

**<u>Գեղարքունիքի մարզային ստորաբաժանում</u>**

**ա) Մանկապարտեզի շենքը ներկայացվել է իրավունքի պետական գրանցման և շինության բնութագրերի գործառնական նշանակությունը նշվել է որպես բնակելի տուն:**
Համաձայն «Հայր և որդի Դավոյաններ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված չափագրման նյութերի, Գավառի թիվ 6 մանկապարտեզի շենքը ներկայացվել է իրավունքի պետական գրանցման և շինությունների բնութագրերի գործառնական նշանակությունը նշվել է որպես բնակելի տուն: Տվյալ դեպքում ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեն պատշաճ հսկողություն չի իրականացրել:

**բ) Օրինական ուժի մեջ մտած դատական ակտն անտեսվել է և սահմանված կարգով չի կատարվել գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցում:**
Քաղաքացի Նարինե Քոչարյանը դիմել է Սևան քաղաքի սպասարկման գրասենյակ՝ իրեն պատկանող 52.78 քմ մակերեսով տնակի նկատմամբ պետական գրանցում ստանալու համար: Այդ նպատակով որպես իրավական հիմք ներկայացրել է ՀՀ վարչական դատարանի համապատասխան վճիռը, որը պարտավորեցնում է Սևանի սպասարկման գրասենյակին կատարել համապատասխան գրանցում: Սակայն մինչ ստուգման ավարտը, գրասենյակը դա չէր կատարել:

**գ/ Համապատասխան փաստաթղթերի առկայության դեպքում կատարվել է հողամասի ոչ ճիշտ մակերեսով իրավունքի պետական գրանցում:**
Մարտունի քաղաքի Կամոյի 19 հասցեում գտնվող վառելանյութի լիցքավորման կայան հասարակական օբյեկտի կադաստրային գործում կան իրարամերժ փաստաթղթեր:

Սեփականատերը սխալն ուղղելու և համապատասխան նոր գրանցում ստանալու խնդրանքով դիմել է տարածքային գրասենյակ, կից ներկայացնելով նաև համայնքի ղեկավարի եզրակացությունը և չափագրողի կողմից տրված չափագրական ակտը:

Այդուհանդերձ, տարածքային գրասենյակը մերժել է սեփականատիրոջ պահանջը՝ նախկին գրանցումը թողնելով անփոփոխ: Տվյալ դեպքում տարածքային գրասենյակը հիմք է ընդունել նույն չափագրողի կողմից կազմված մեկ այլ փաստաթուղթ:

Միևնույն չափագրողը իրական չափերի վերաբերյալ տարբեր ժամանակահատվածներում տվել է իրար հակասող երկու եզրակացություն:

<u>Շիրակի մարզային ստորաբաժանում</u>

**ա) Հիմնավոր փաստաթղթերի բացակայությամբ, օրենքով սահմանված կարգով չի կասեցվել և չի դադարեցվել վարույթը:**

ՀՀ պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցանկում գրանցված շենքում գտնվող խանութի տարածքը (ք.Գյումրի, Ռիժկովի 6) տարիների ընթացքում ձևափոխվել է՝ չպահպանելով պատմամշակութային անշարժ հուշարձանի ճակատային տեսքը: Բոլոր փոփոխությունները համապատասխանաբար գրանցվել են անշարժ գույքի պետական գրանցման տարածքային գրասենյակի կողմից: Նման դեպքում ցանկացած փոփոխություն կարող է լինել միայն ՀՀ կառավարության թույլտվության պարագայում՝ համապատասխան պետական լիազոր մարմնի եզրակացության հիման վրա: Սակայն, տվյալ դեպքում, դա չի ապահովվել, իսկ անշարժ գույքի պետական գրանցման տարածքային գրասենյակի կողմից որևէ քայլ վարույթը կասեցնելու և դադարեցնելու ուղղությամբ չի կատարվել:

**բ) Կառուցապատման նպատակով տրամադրված նպատակային նշանակության բնակավայրերի, գործառնական նշանակության ընդհանուր օգտագործման հողամասերում, որոնք ընդգրկված են ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված սահմանափակումներում, ինքնակամ կառուցվել են գազալցակայաններ:**
ք.Գյումրի, Վ.Սարգսյան 17/2 և Մարմարաշենի խճուղի 2 հասցեներում ինքնակամ կառուցվել է գազալցակայան: Դրանք ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասեր են: ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանվում է, որ ինքնակամ կառույցները չեն կարող ճանաչվել օրինական և դրանք ենթակա են քանդման, եթե կառուցված են ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա: Անհրաժեշտ է նշել, որ վերոհիշյալ անշարժ գույքը ստորաբաժանման կողմից իրավունքի պետական գրանցում չի ստացել:

**գ) Կադաստրային գործում հողի կարգավիճակի վերաբերյալ որևէ իրավահաստատող փաստաթուղթ (համայնքի ղեկավարի որոշում իրավունքի վերաբերյալ, ՀՀ Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի պահանջի վերաբերյալ տեղեկանք) առկա չէ:**
Առանց սեփականության փաստն իրավահաստատող փաստաթղթերի (համայնքի ղեկավարի որոշում, ՀՀ հողային օրենսգրքի 60-րդ հոդվածի պահանջի վերաբերյալ տեղեկանք), անշարժ գույքի պետական գրանցման տարածքային ստորաբաժանման կողմից գրանցվել է Ախուրյան քաղաքի Գյումրու խճուղի 66 հասցեում գտնվող գազալցակայանը:

Երկակի մոտեցում կիրառելով՝ անշարժ գույքի պետական գրանցման կառույցները կասեցման ենթակա գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումը, պարզապես, չեն կասեցրել:

**ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի Գեղարքունիքի և Շիրակի մարզային կառույցներում իրականացված վերահսկողությամբ արձանագրված խախտումներն ու թերությունները ներկայացված են Վերահսկիչ պալատի համապատասխան ընթացիկ հաշվետվություններում:**

## 3. ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**Վերջին 7 տարիների ընթացքում կայուն կերպով զարգանում է Վերահսկիչ պալատի միջազգային համագործակցության շրջանակը:**

Երկու տասնյակից ավելի երկրների բարձրագույն վերահսկիչ մարմինների հետ արդեն կան համագործակցության համաձայնագրեր, հստակ պայմանավորվածություններ և մեկնարկած համատեղ ծրագրեր: Համագործակցության աշխարհագրությունն ընդգրկում է թե եվրոպական և թե ասիական տիրույթը: Ակտիվ է նաև ԼՂՀ վերահսկիչ պալատի հետ համագործակցությունը:

Դոնոր կազմակերպությունների հետ համագործակցությունը նույնպես արդյունավետ է: Կան Վերահսկիչ պալատի զարգացմանն ու հզորացմանն ուղղված հաջողված ծրագրեր, մասնավորապես՝ Եվրոպական Միության, Գերմանիայի Միջազգային Համագործակցության Ընկերության (GIZ), Համաշխարհային Բանկի, ՍԻԳՄԱ ծրագրի և այլ նախաձեռնությունների հետ տարվող աշխատանքներում:

Այդ ծրագրերի միջոցով վերահսկողության գործընթացում ներդրվում են նոր ենթակառուցվածքներ: Վերահսկիչները վերապատրաստվում և շարունակում են հատուկ դասընթացներ անցնել տարբեր ուղղություններով: Թարմացվում և վերանայվում են վերահսկողական մեթոդաբանության մոտեցումները:

Ինստիտուցիոնալ զարգացման առումով Վերահսկիչ պալատն առաջնորդվում է «ՎԵՐԱՀՍԿԻՉ ՊԱԼԱՏԻ ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԵՎ ԴՐԱ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ 2011-2016 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ»-ի դրույթներով: Փաստաթուղթը մշակվել է Եվրոպական Միության աջակցությամբ: Այն ընդգրկում է Վերահսկիչ պալատի զարգացման ողջ տիրույթը՝ առկա խնդիրներով, հնարավոր ռեսուրսներով և հեռանկարային քայլերով հանդերձ:

Վերահսկիչ պալատի զարգացման աջակցության գործում միջազգային դոնոր ընկերությունները դրսևորում են միասնական մոտեցում: Արդյունքն ակնհայտ է:

**Հաշվետու տարում ամփոփվել է Հայաստանի Հանրապետության պետական ծախսերի և ֆինանսական հաշվետվողականության «անկախ» գնահատման 2013 թվականի հաշվետվությունը (PEFA), որով, 31 ցուցանիշների թվում, գնահատվել էր նաև Վերահսկիչ պալատում բարեփոխումների ընթացքը:**

**Արձանագրվել է Վերահսկիչ պալատի ցուցանիշի աննախադեպ բարելավում: Ըստ միջազգային մեթոդաբանության, ցուցանիշի բարձրացումը կրում է շարունակական բնույթ: Պետական ֆինանսների կառավարման համակարգի բարելավված ցուցանիշների շարքում Վերահսկիչ պալատի առաջընթացի նման միտումը եզակի է:**

**Արտաքին պետական վերահսկողության առաջընթացը պայմանավորված է, նախ և առաջ, վերահսկողության շրջանակի և բնույթի ամրապնդմամբ, գործառույթների իրականացման կայունությամբ, ինչպես նաև հետվերահսկողության փուլում Վերահսկիչ պալատի կողմից եզրահանգումների և առաջարկությունների իրագործման մասով հետևողական աշխատանքով:**